ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 3 (23)

Агенство интеллектуальной собственности
Республики Армения

ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2002 թվականի սեպտեմբերի 26-ից

Երեւան 2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 5

Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ դրանց քննարկման կարգ 7

ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի գանձման եւ հաշվառման կարգ 15

ԳՅՈՒՏԵՐ 21, 113

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 23, 115

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ 33, 123

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 35, 125

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ..... 37, 127

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին..... 39, 129

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 41

Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին 43

ՑՈՒՑԻՉՆԵՐ 99

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 103

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 130

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Издается Агенством интеллектуальной собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 общий отдел
Тел. 561-126 отдел информационных технологий

Internet:http://www.armpatent.org
E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5
Порядок подачи возражений и заявлений и их рассмотрения в Апелляционном совете Патентного управления Республики Армения .	7
Порядок взимания и расчета Патентным управлением при Правительстве РА государственных пошлин, связанных с правовой защитой объектов промышленной собственности и топологий интегральных микросхем	15
ИЗОБРЕТЕНИЯ	21, 113
Сведения о выданных патентах	23, 115
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	33, 123
Сведения о выданных патентах	35, 125
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	37, 127
Сведения о выданных патентах	39, 129
ТОВАРНЫЕ ЗНАКИ	41
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	43
УКАЗАТЕЛИ	99
СООБЩЕНИЯ	103
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	130

CONTENTS

LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS	5
The rule for filing of applications and appeals with and their discussion in the Board of Apeal of the Armenian Patent Office under the Government of the RA.	7
The rule for accounting and levy of state fees related to the legal protection of Industrial Property subject matters and integrated circuits topographies defined by Armenian Patent Office under the Government of the RA.	15
INVENTIONS	21, 113
Information on granted patents	23, 115
UTILITY MODELS	33, 123
Information on granted patents	35, 125
INDUSTRIAL DESIGNS	37, 127
Information on granted patents	39, 129
TRADE MARKS	41
Information on registered trade marks and service marks	43
INDEXES	99
REPORTS	103
TWO-LETTER CODES	130

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

301.0015.260301 «Ոչ պաշտոնական հրատարակություն»

Հաստատված է
Հայարտոնագրի պետի
2001թ. մարտի 23-ի
№15 հրամանով

ԿԱՐԳ
Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ դրանց քննարկման

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կարգը սահմանված է Հայարտոնագրի բողոքարկման խորհրդի կանոնադրության 1.3 կետին համապատասխան եւ նախատեսված է կարգավորել արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահտպանության հետ կապված բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման հետ կապված հարցերը:

2. Բողոքարկման խորհուրդ ներկայացվող բողոքները եւ դիմումները

Հայարտոնագրի բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ նաեւ խորհուրդ) կարող են ներկայացվել հետեւյալ բողոքները եւ դիմումները:

2.1. Գյուտի արտոնագիր չտալու մասին կրկնական նախնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.2 Օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի արտոնագիր չտալու մասին կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.3. Ապրանքային կամ սպասարկման նշանի (այսուհետ՝ ապրանքային նշան) գրանցման, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) օգտագործման իրավունքի վկայական ստանալու հայտը քննարկման չընդունելու մասին նախնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.4. Առարկության քննարկման արդյունքում գյուտի նախնական արտոնագիր չտալու մասին կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.5. Գյուտի հիմնական արտոնագիր չտալու մասին գերատեսչության որոշման վերաբերյալ:

2.6. Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հայտարկվող նշանի փորձաքննության որոշման վերաբերյալ, այդ թվում՝ նշանը չգրանցելու մասին վերջնական մերժումները, որոնք ընդունվել են հայտարկվող նշանի փորձաքննության արդյունքում՝ Մադրիդյան համաձայնագրի 5 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ կետերին համապատասխան:*

2.7. Ապրանքի ծագման տեղանվան գրանցումը մերժելու եւ (կամ) դրա օգտագործման իրավունք չտալու մասին հայտարկվող տեղանվան փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.8. Ֆիրմային անվանման գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.9. Ապրանքային նշանը գրանցելու մասին հայտարկվող նշանի փորձաքննության որոշման վերաբերյալ, այդ թվում՝

ա) ապրանքային նշանի մեկ կամ մի քանի տարրերը փորձաքննության կողմից պաշտպանությունից հանելու դեպքում.

բ) ապրանքային նշանի գրանցման ընթացքում հայտատուի ներկայացրած ապրանքների ցանկը փորձաքննության կողմից փոփոխվելու դեպքում:

2.10. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու դեմ:

2.11. Ապրանքային նշանի գրանցման դեմ, այդ թվում՝ Մադրիդյան համաձայնագրի 5 հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

**** Մադրիդյան համաձայնագրին համապատասխան***

2.12. Ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) տեղանվան օգտագործման իրավունքի վկայական տալու դեմ:

2.13. Ապրանքային նշանը Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 6 bis հոդվածի 1-ին կետին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ:

3. Բողոքների եւ դիմումների ներկայացման պայմանները

3.1. Սույն կարգի 2.1-2.9 կետերին համապատասխան բողոքը ներկայացվում է հայտատուի կողմից անմիջականորեն կամ նրա ներկայացուցչի միջոցով:

Սույն կարգի 210-2.12 կետերին համապատասխան բողոքը ներկայացվում է ցանկացած անձի կողմից անմիջականորեն կամ նրա ներկայացուցչի միջոցով:

Բողոքի (դիմումի) գործերը վարելու եւ դրա քննարկման ընթացքում իր շահերը ներկայացնելու համար, հայտատուն կարող է նշանակել ներկայացուցիչ՝ նրան տալով սահմանված պահանջներին համապատասխան ձեւակերպված լիազորագիր:

Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրող ֆիզիկական անձինք եւ օտարերկրյա իրավաբանական անձինք կամ նրանց արտոնագրային հավատարմատարները բողոքների եւ դիմումների ներկայացման հետ կապված գործերը վարում են Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Նշված լիազորագիրը կարող է ներկայացվել բողոքի (դիմումի) հետ կամ գործավարության ընթացքում:

3.2. Սույն կարգի 2.13 կետին համապատասխան դիմումը ներկայացվում է այն անձի կամ նրա ներկայացուցչի միջոցով, որը իր ապրանքային նշանը համարում է հանրահայտ (այսուհետ՝ հայտատու):

3.3. Բողոքում նշվում են՝ գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, ապրանքի ծագման տեղանվան հայտի համարը, իսկ պահպանական փաստաթղթի վիճարկման դեպքում արտոնագրի եւ (կամ) գրանցման վկայականի համարը, բողոքարկողի ազգանունը, անունը, հայրանունը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը եւ նամակագրության հասցեն:

3.4. Սույն կարգի 2.1 - 2.2 եւ 2.4 - 2.5 կետերին համապատասխան բողոքը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.3, 2.6, 2.7 եւ 2.9 կետերին համապատասխան բողոքը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.8 կետին համապատասխան բողոքը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

3.5. Սույն կարգի 2.10 կետին համապատասխան բողոքը ներկայացվում է արտոնագրի գործողության ամբողջ ժամկետում:

Սույն կարգի 2.11 կետին համապատասխան, ապրանքային նշանի գրանցման դեմ բողոքը ներկայացվում է ապրանքային նշանի գրանցման գործողության ամբողջ ժամկետում՝ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների» մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Ապրանքային նշանների մասին օրենք) 3 եւ 11 հոդվածներով սահմանված պահանջների խախտման դեպքում եւ ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից 5 տարվա ընթացքում՝ նույն օրենքի 12 հոդվածի համաձայն:

3.6. Բողոքին (դիմումին) կցվում է սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Առանց սահմանված տուրքի վճարման անդորրագրի բողոքը (դիմումը) քննարկման չի ընդունվում:

3.7. Սույն կարգի 3.4 կետով սահմանված ժամկետները խախտելու դեպքում բողոքը կարող է քննարկման ընդունվել բաց թողած ժամկետների վերականգնման մասին խնդրագրի առկայության դեպքում: Խնդրագիրը ներկայացվում է բողոքի հետ միաժամանակ, որպես դրա բաղկացուցիչ մաս կամ բողոքին կից հավելվածի տեսքով:

Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտով փորձաքննության որոշմանը վերաբերող բողոքի ներկայացման բաց թո-

ղած ժամկետների վերականգնման մասին խնդրագիրը ներկայացվում է ժամկետի ավարտման օրվանից ոչ ավելի, քան վեց ամսվա, իսկ ապրանքային նշանին վերաբերող խնդրագիրը՝ երեք ամսվա ընթացքում:

Այս դեպքում բողոքի եւ խնդրագրի հետ միասին պետք է ներկայացվի բաց թողած ժամկետների վերականգնման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

Առանց բաց թողած ժամկետների վերականգնման համար սահմանված տուրքի վճարման անդորրագրի բողոքը քննարկման չի ընդունվում:

3.8. Այն դեպքում, երբ վճարված տուրքի գումարը գերազանցում է օրենքով սահմանված չափերը, ապա հայտատուի դիմումի համաձայն այն կարող է օգտագործվել մեկ այլ գործողության կամ արդյունաբերական սեփականության մեկ այլ օբյեկտի իրավական պահպանության հետ կապված գործողության համար: Հակառակ դեպքում, հայտատուի դիմումի համաձայն, ավել վճարված գումարը օրենքով սահմանված կարգով վերադարձվում է հայտատուին:

3.9. Սույն կարգի 2.1-2.9 կետերին համապատասխան բողոքը պետք է պարունակի փորձաքննության որոշման անճշտությունը հաստատող փաստարկներ, վերաբերի գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, ապրանքի ծագման տեղանվան մեկ հայտի եւ ներկայացվի երկու օրինակից:

3.10. Սույն կարգի 2.10-2.12 կետերին համապատասխան բողոքը պետք է պարունակի պահպանական փաստաթուղթը եւ (կամ) գրանցումը ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ, վերաբերի մեկ պահպանական փաստաթղթի եւ (կամ) մեկ գրանցման ու ներկայացվի երկու օրինակից:

3.11. Սույն կարգի 2.10 կետին համապատասխան բողոքը պետք է պարունակի «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ եւ (կամ) 3-րդ ենթակետերով սահմանված հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ:

3.12. Սույն կարգի 2.11 եւ 2.12 կետերին համապատասխան բողոքը պետք է պարունակի Ապրանքային նշանների մասին օրենքի 28 եւ 43 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ:

3.13. Սույն կարգի 2.13. կետին համապատասխան դիմումը պետք է պարունակի ապրանքային նշանի հանրահայտ լինելը հաստատող փաստացի տեղեկություններ:

4. Բողոքի (դիմումի) ընդունումը եւ գրանցումը

4.1. Որպես բողոք քննարկման է ընդունվում սույն կարգի 2.1-2.12, 3.1, 3.3-3.5 եւ 3.9-3.12 կետերով սահմանված պահանջներին բավարարող գրավոր խնդրագիրը:

4.2. Խորհուրդ ներկայացված բողոքը (դիմումը) գրանցվում է, եւ դրան տրվում է մտից համար:

4.3. Բողոքի (դիմումի) ստացման օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկողին (դիմողին) ուղարկվում է ծանուցագիր բողոքը (դիմումը) քննարկման ընդունելու մասին, որի մեջ նշվում է խորհրդի կոլեգիայի նիստում բողոքի (դիմումի) քննարկման թվականը:

Սույն կարգի 2.10-2.12 կետերին համապատասխան բողոքը քննարկման ընդունելու մասին ծանուցագիր է ուղարկվում նաեւ վիճարկվող պահպանական փաստաթղթի սեփականատիրոջը՝ կցելով դրան բողոքի պատճենը՝ վիճարկման վերաբերյալ իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ, ինչը կարող է արվել ոչ ուշ, քան կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 10 օր առաջ:

Ապրանքային նշանի սեփականատիրոջը, որի նշանը գրանցվել է նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համաձայնագրի համաձայն, վերը նշված ծանուցագիրը ուղարկվում է անմիջականորեն նշանի սեփականատիրոջը: Ընդ որում նշվում է, որ վիճարկվող գրանցման գործողության վերաբերյալ նա կարող է ներկայացնել իր նկատառումները, բողոքի քննարկման հետ կապված գործերը վարելով Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Կոլեգիայի բոլոր ծրագրված նիստերի անցկացման ժամկետների մասին խորհուրդը տեղեկացնում է Հայարտոնագրի համապատասխան փորձաքննական ստորաբաժանմանը (այսուհետ՝ փորձաքննության բաժին):

4.4. Այն դեպքում, երբ խորհուրդ ներկայացված խնդրագիրը չի համապատասխանում

սույն կարգի 3.1, 3.3-3.4 կետերով սահմանված պահանջներին, բացառությամբ 3.1 կետի 3-րդ մասով նախատեսված լիազորագրի ձեւակերպմանը վերաբերող պահանջների, դրա ստացման օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում բողոքարկողին ծանուցագիր է ուղարկվում այն մասին, որ ստացված խնդրագիրը որպես բողոք քննարկման ենթակա չէ:

Այն դեպքում, երբ խնդրագիրը չի համապատասխանում սույն կարգի 3.9-3.12 կետերով, 3.1 կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված պահանջներին, խնդրագրրի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկողին ուղարկվում է հարցում՝ այն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում խնդրագիրը որպես բողոք քննարկելու համար անհրաժեշտ տեղեկություններ ներկայացնելու առաջարկությամբ:

Պահանջված տեղեկությունները ժամանակին ներկայացնելու դեպքում, բողոքի ստացման թվական է համարվում խորհրդի կողմից դրանցից վերջինի ստացման թվականը, ընդ որում սույն կարգի 4.3 կետի համաձայն, մեկ ամսվա ընթացքում բողոքարկողին ուղարկվում է ծանուցագիր՝ բողոքը քննարկման ընդունելու մասին:

Նշված եռամսյա ժամկետում պահանջված տեղեկությունները չներկայացնելու դեպքում, խնդրագիրը որպես բողոք քննարկման չի ընդունվում, ինչի մասին խորհուրդը, հարցումն ուղարկելու օրվանից հինգ ամիսը լրանալուն պես, ծանուցում է բողոքարկողին:

4.5. Սույն կարգի 4.3 եւ 4.4 կետերում նշված ծանուցումները եւ հարցումներն ստորագրում է խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը:

4.6. Հայտատուի խնդրանքով բողոքը (դիմումը) կարող է հետ կանչվել դրա քննարկման ցանկացած փուլում մինչեւ Բողոքարկման խորհրդի կոլեգիայի նիստում խորհրդի որոշման հրապարակումը: Այս դեպքում բողոքի կամ դիմումի քննարկումը եւ դրանցով վարվող գործավարությունը դադարեցվում է:

Եթե բողոքի (դիմումի) հետ կանչման մասին խնդրագիրը Բողոքարկման խորհուրդ է ներկայացվել մինչեւ սույն կարգի 4.3. կետով նախատեսված՝ բողոքը (դիմումը) քննարկման ընդունելու մասին ծանուցագրի առաքումը հայտատուին, ապա վերջինիս խնդրագրի հիման վրա վճարված պետական տուրքի գումարը կարող է վերադարձվել կամ սահմանված կարգով օգտագործվել այլ տուրքերի վճարման համար: Հակառակ դեպքում վճարված պետական տուրքի գումարը վերադարձման ենթակա չէ:

5. Բողոքի (դիմումի) քննարկման ժամկետները

5.1. Սույն կարգի 2.1 – 2.2, 2.4, 2.5 կետերին համապատասխան բողոքը քննարկվում է դրա ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.3, 2.6 - 2.9 եւ 2.11–2.12 կետերին համապատասխան բողոքը քննարկվում է դրա ստացման օրվանից եռամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.10 կետին համապատասխան բողոքը քննարկվում է դրա ստացման օրվանից 6-ամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.13 կետին համապատասխան դիմումը քննարկվում է դրա ստացման օրվանից եռամսյա ժամկետում:

5.2. Ցանկացած անձ, որին ուղարկվել է բողոքը քննարկման ընդունելու մասին ծանուցագիր, սույն կարգի 4.3 կետի համաձայն, կարող է դիմել խորհուրդ՝ կոլեգիայի նիստի անցկացման ժամկետների տեղափոխման խնդրանքով, սույն կարգի 4.1 կետին համապատասխան ժամկետների սահմաններում:

Դիմումը ներկայացվում է գրավոր, եւ դրա բավարարման դեպքում նշանակվում է կոլեգիայի նիստի անցկացման նոր թվական, ինչի մասին ծանուցվում են գանգատի քննարկման բոլոր մասնակիցները:

Կողմերից մեկի խնդրանքով եւ քննարկման բոլոր մասնակիցների համաձայնությամբ, գանգատի քննարկման սկիզբը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան վեց ամսով, սկսած սույն կարգի 5.1 կետով սահմանված ժամկետի ավարտի օրվանից:

5.3. Սույն կարգի 5.1 կետով սահմանված ժամկետները կարող են երկարաձգել նաեւ Բողոքարկման խորհուրդի նախաձեռնությամբ՝ բողոքի (դիմումի) սպառիչ լրիվությամբ եւ անշահախնդիր քննարկումն ապահովելու նպատակով, ոչ ավելի քան վեց ամսով:

Եթե հարցվել են բողոքի կամ դիմումի քննարկման համար անհրաժեշտ լրացուցիչ նյութեր, արա մինչեւ դրանց ստացումը նշված ժամկետների ընթացքը կասեցվում է:

6. Բողոքի քննարկումը խորհրդի կոլեգիայի նիստում

6.1. Բողոքը կամ դիմումը քննարկվում է խորհրդի կոլեգիայի նիստում, քննարկմանը մասնակցող անձանց պարտադիր ներկայությամբ:

Կոլեգիայի կազմում չպետք է ընդգրկվեն բողոքի կամ փորձաքննության բաժնի վիճարկվող որոշում ընդունած փորձագետի հետ ազգակցական կապեր ունեցող անձինք, ինչպես նաեւ փորձաքննության վիճարկվող որոշման ընդունմանը ուղղակի կամ անուղղակի մասնակցած անձինք:

6.2. Բողոքի (դիմումի) քննարկմանը կարող են մասնակցել՝ բողոքարկողը (դիմողը), պահպանական փաստաթղթի սեփականատերը եւ (կամ) նրանց լիազորած ներկայացուցիչը եւ փորձաքննության բաժնի ներկայացուցիչները:

Հայարտոնագրի աշխատակիցները չեն կարող լինել նշված անձանց ներկայացուցիչներ:

6.3. Ցանկացած մասնակից, անհրաժեշտության դեպքում, կարող է այլ մասնագետներ հրավիրել բողոքի քննարկմանը մասնակցելու համար:

Այն հայտերով, որոնց մասին դեռեւս տեղեկությունները չեն հրապարակվել, այլ մասնագետների հրավիրումը հնարավոր է միայն հայտատուի համաձայնության դեպքում:

6.4. Քննարկման մասնակիցները իրավունք ունեն նախօրոք ծանոթանալ գործի նյութերին, դրանցից քաղվածքներ եւ պատճեններ անել, իսկ քննարկման ընթացքում՝ հարցեր տալ մյուս մասնակիցներին եւ կոլեգիայի անդամներին, խնդրագրեր ներկայացնել, տալ բանավոր եւ (կամ) գրավոր պարզաբանումներ քննարկվող հարցի էության վերաբերյալ, որոնք կցվում են կոլեգիայի նիստի արձանագրությանը:

6.5. Կոլեգիայի նիստի անցկացման տեղի եւ թվականի մասին ծանուցում ստացած մասնակցի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի (դիմումի) քննարկմանը:

Սակայն կոլեգիան իրավասու է մասնակիցներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում հետաձգել նիստը, անհնար համարելով բողոքի (դիմումի) քննարկումը տվյալ նիստի ընթացքում:

6.6. Կոլեգիայի նիստը հետաձգելու կամ այն կրկին անգամ անցկացնելու անհրաժեշտության դեպքում նիստի անցկացման նոր ժամկետը կարող է նշանակվել ոչ շուտ, քան առաջինից մեկ ամիս անց, հետաձգելով նաեւ բողոքի քննարկման ժամկետը, ինչը պետք է համաձայնեցվի բողոքարկողի (դիմողի) հետ:

6.7. Նիստը ղեկավարում է կոլեգիայի նախագահը, ապահովելով բողոքի (դիմումի) ամբողջական, բազմակողմանի եւ անկողմնակալ քննարկումը: Նախագահողը բացում է կոլեգիայի նիստը, ներկայացնում է կոլեգիայի անդամներին եւ քննարկմանը մասնակցող անձանց:

6.8. Քննարկման յուրաքանչյուր մասնակից կարող է բացարկ հայտարարել կոլեգիայի ցանկացած անդամի (անդամների)՝ սույն կարգի 6.1. կետում նշված պատճառների հիման վրա: Բացարկը պետք է լինի պատճառաբանված եւ հայտարարվի գործի ըստ էության քննարկումից առաջ:

Բացարկը քննարկվում է կոլեգիայի անդամների կողմից, եւ այն բավարարելու դեպքում նշանակվում է կոլեգիայի նոր կազմ, որը որոշում է բողոքի (դիմումի) քննարկման նոր ժամկետը:

6.9. Բողոքի (դիմումի) ըստ էության քննարկումն սկսվում է նախագահողի կամ կոլեգիայի անդամներից մեկի զեկուցումով:

Գործի հետագա քննարկումը կատարվում է հետեւյալ հաջորդականությամբ՝

ա) բողոքարկողի (դիմողի) եւ (կամ) նրա ներկայացուցչի ելույթը.

բ) փորձաքննության բաժնի ներկայացուցչի ելույթը.

գ) արտոնագրատիրոջ (ապրանքային նշանի սեփականատիրոջ) ելույթը պահպանական փաստաթղթի վիճարկման դեպքում.

դ) կողմերի պատասխանները կոլեգիայի անդամների հարցերին:

6.10. Գործի էության քննարկման ընթացքում կոլեգիան սահմանափակվում է փորձաքննության ընթացքում քննարկված նյութերով եւ լրացուցիչ որոնումներ չի կատարում:

6.11. Նոր ներկայացված տեղեկությունների վերաբերյալ ավելի մանրամասն հետազոտություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, կոլեգիայի որոշմամբ նիստը կարող է հետաձգվել սույն կարգի 6.6 կետի դրույթներին համապատասխան:

6.12. Կոլեգիայի նիստի ընթացքը արձանագրվում է, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ ձայնագրվում մագնիսական ժապավենի վրա, ինչի մասին տեղեկացվում են բոլոր մասնակիցները:

Արձանագրությունը կցվում է գործին:

6.13. Կոլեգիայի նիստի արձանագրությունը վարում է կոլեգիայի քարտուղարը, որը նշանակվում է նախագահողի կողմից՝ կոլեգիայի անդամներից:

6.14. Արձանագրության մեջ նշվում են՝

նիստի անցկացման թվականը.

կոլեգիայի անդամների եւ նիստի մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը. նրանց առնչությունը քննարկվող հարցին.

քննարկվող հայտի, արտոնագրի եւ (կամ) նշանի վկայականի համարը եւ օբյեկտի անվանումը (նշանի պատկերը) (սույն կարգի 2.13 կետով նախատեսված դիմումի քննարկման դեպքում բերվում է ապրանքային նշանի նկարագրությունը).

գործի գրանցման համարը.

տեղեկություններ նիստի մասնակիցների մասին.

բողոքում (դիմումում) կամ փորձաքննության որոշման մեջ բացակայող փաստարկների, խնդրագրերի կամ պարզաբանումների վերաբերյալ մասնակիցների դիմումների համառոտ շարադրանքը.

կոլեգիայի որոշման բանաձեւային մասը.

6.15. Քննարկմանը մասնակցող անձինք եւ կոլեգիայի անդամները կարող են արձանագրության մեջ մտցնել իրենց հատուկ կարծիքը կամ այն գրավոր ներկայացնել եռօրյա ժամկետում: Վերջինս գրանցվում եւ կցվում է կոլեգիայի նիստի արձանագրությանը:

6.16. Արձանագրությունը հրապարակում է նախագահողը, եւ այն տրվում է կոլեգիայի անդամներին՝ ստորագրության:

7. Բողոքարկման խորհրդի որոշումները

7.1. Սույն կարգի 2.1–2.3 կետերին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, կրկնական նախնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գյուտի հայտով գործավարությունը շարունակելու մասին.

բ) բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու մասին.

գ) բողոքը բավարարելու, նախնական փորձաքննության որոշումը չեղյալ չանաչելու եւ ապրանքային նշանի, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) օգտագործման իրավունքի հայտը քննարկման ընդունելու մասին.

դ) բողոքը մերժելու եւ նախնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.2. Սույն կարգի 2.4 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գյուտի նախնական արտոնագիր տալու մասին.

բ) բողոքը մերժելու եւ կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.3. Սույն կարգի 2.5 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, գերատեսչության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գյուտի հիմնական արտոնագիր տալու մասին.

բ) բողոքը մերժելու եւ գերատեսչության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.4. Սույն կարգի 2.6 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, հայտարկվող նշանի փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ ապրանքային նշանը գրանցելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.5. Սույն կարգի 2.7 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, հայտարկվող տեղանվան փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու, ապրանքի ծագման տեղանունը գրանցելու եւ դրա օգտագործման իրավունք ընձեռելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.6. Սույն կարգի 2.8 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ հայտարկվող ֆիրմային անվանումը գրանցելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.7. Սույն կարգի 2.9 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, փորձաքննության որոշումը փոփոխելու եւ բողոքով նախատեսված փոփոխություններով՝ հայտարկվող նշանը գրանցելու մասին.

բ) բողոքը բավարարելու եւ հայտարկվող նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու մասին.

գ) բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.8. Սույն կարգի 2.10 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքն ամբողջովին կամ մասնակիորեն բավարարելու, արտոնագիր տալու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու կամ որոշումը փոփոխելու եւ պահտպանական փաստաթուղթն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ պահտպանական փաստաթուղթն ուժի մեջ թողնելու մասին:

7.9. Սույն կարգի 2.11 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, ապրանքային նշանը գրանցելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու կամ փոփոխելու եւ (կամ) նշանի գրանցումն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ նշանի գրանցումն ուժի մեջ թողնելու մասին:

7.10. Սույն կարգի 2.12 կետին համապատասխան բողոքի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) բողոքը բավարարելու, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ (կամ) դրա օգտագործման իրավունք ընձեռելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գրանցման եւ (կամ) ապրանքի ծագման տեղանվան օգտագործելու իրավունքի վկայականը անվավեր ճանաչելու մասին.

բ) բողոքը մերժելու եւ տեղանվան գրանցումը եւ (կամ) վկայականը ուժի մեջ թողնելու մասին:

7.11. Սույն կարգի 2.13 կետին համապատասխան դիմումի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) դիմումը ամբողջովին կամ մասնակիորեն բավարարելու եւ ապրանքային նշանը ՀՀ-ում հանրահայտ ճանաչելու մասին.

բ) ապրանքային նշանը ՀՀ-ում հանրահայտ ճանաչելու մասին դիմումը մերժելու մասին:

8. Բողոքարկման խորհրդի որոշման ուժի մեջ մտնելը

8.1. Բողոքի (դիմումի) քննարկումը կոլեգիայի նիստում (նիստերում) ավարտելու եւ արձանագրությունը ստորագրելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կոլեգիան խորհրդի անունից բողոքի (դիմումի) վերաբերյալ ընդունում է հիմնավորված որոշում:

8.2. Կոլեգիան որոշումներ է ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում կոլեգիայի ղեկավարի ձայնը վճռորոշ է:

8.3. Սահմանված ձեւով կազմված որոշումն ստորագրում է բողոքարկման խորհրդի նախագահը:

Կոլեգիայի ցանկացած անդամի հատուկ կարծիքը գրանցվում է որոշման հավելվածում:

8.4. Խորհրդի որոշումը կցվում է գործին, իսկ դրա պատճենը՝ ոչ ուշ, քան որոշումն ընդունելուց 15 օր հետո ուղարկվում է բողոքարկողին (դիմողին), իսկ պահտպանական փաստաթղթի վիճարկման դեպքում՝ նաեւ դրա սեփականատիրոջը:

8.5. Խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում այդ որոշումը սույն կարգի 8.4 կետում նշված անձանց ուղարկելու օրվանից:

8.6. Խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան:

9. Հետագա գործավարությունը

9.1. Գործի նյութերը վերադարձվում են փորձաքննության բաժին՝ ընդունված որոշմանը համապատասխան հետագա գործավարության համար:

9.2. Խորհրդի որոշումն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում փորձաքննության բաժինը ընդունում է նոր, խորհրդի որոշմանը համապատասխան որոշում:

9.3. Գործը կոլեգիայի նիստի արձանագրության եւ խորհրդի որոշման պատճենի հետ միասին պահվում է խորհրդում, մինչեւ արդյունաբերական սեփականության օբյեկտների մասին ՀՀ համապատասխան օրենքով խորհրդի որոշումները դատարանում բողոքարկելու համար բոլոր սահմանված ժամկետների ավարտը:

Գրանցված է
ՀՀ Արդարադատության
նախարարության կողմից
28.09.2001թ., №30101155

301.0016.260301 «Ոչ պաշտոնական հրատարակություն»

Հաստատված է
ՀՀ կառավարությանն առընթեր
արտոնագրային վարչության
պետի 2001թ. մարտի 26-ի
№16 հրամանով

ԿԱՐԳ

ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի գանձման եւ հաշվառման

1. Սույն հրահանգը հաստատված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 37-րդ հոդվածի եւ 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն եւ նախատեսված է կարգավորելու արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային նշաններ, ապրանքների ծագման տեղանուններ, ֆիրմային անվանումներ) (այսուհետ՝ օբյեկտ) եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների (այսուհետ՝ տոպոլոգիա) իրավական պահպանության հետ կապված օրենքով նախատեսված պետական տուրքերի գանձման եւ հաշվառման հետ կապված հարցերը:

2. Սույն հրահանգը տարածվում է ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության (այսուհետ՝ Հայարտոնագիր) կենտրոնական ապարատի այն կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք իրականացնում են օբյեկտների կամ տոպոլոգիայի հայտերի ընդունումը, փորձաքննությունը, գրանցումը եւ դրանց իրավական պահպանության հետ կապված այլ գործողություններ:

3. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն օբյեկտի կամ տոպոլոգիայի իրավական պահպանության հետ կապված որեւէ գործողություն կարող է կատարվել միայն համապատասխան պետական տուրքի վճարումից հետո: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական տուրքի հաշվարկման եւ գանձման նպատակով գործողությունների կատարման եւ ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը:

Հայարտոնագրի ստորաբաժանումները պետական տուրքերը գանձում են միայն անկանխիկ եղանակով:

4. Օբյեկտի կամ տոպոլոգիայի հայտ ներկայացնելու, ինչպես նաեւ դրա իրավական պահպանության հետ կապված որեւէ այլ գործողություն կատարելու համար դիմում ներկայացնելու դեպքում հայտին կամ դիմումին կցվում է օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ բանկային հանձնարարագիրը (դրանց բնօրինակը):

5. Պետական տուրքը վճարվում է ՀՀ կենտրոնական բանկում բացված հետեւյալ հաշիվներին.

ա) օբյեկտների եւ տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար՝ 900005016200 հաշվին,

բ) «Հայաստան», «հայ», «հայկական» բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար՝ 900005016358 հաշվին:

6. Եթե հայտատուն մեկ անդորրագրով վճարել է տարբեր օբյեկտներին (հայտերին) վե-

րաբերող գործողությունների համար պետական տուրքեր, ապա անդորրագրին կցվում է տվյալ օբյեկտների (հայտերի) ցանկը՝ նշելով յուրաքանչյուր օբյեկտի մասով պետական տուրքի չափը ըստ գործողությունների:

Այս դեպքում անդորրագրի վրա նշվում է այն հայտի համարը, որի գործին կցվում է անդորրագրի բնօրինակը (օրինակ՝ «բնօրինակը կցված է դիայտին» գրառման տեսքով), իսկ յուրաքանչյուր օբյեկտի գործին կցվում է վճարման անդորրագրի պատճենը եւ վերոհիշյալ ցանկը՝ տվյալ օբյեկտի առանձին նշմամբ (ընդգծմամբ):

7. Հայարտոնագրի ստորաբաժանումները պետական տուրքերի գանձումը եւ հաշվառումն իրականացնում են հետեւյալ հետեւյալ գործողությունների համար՝

գյուտերի եւ օգտակար մոդելների փորձաքննության բաժին՝ *գյուտերի, օգտակար մոդելների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ներկայացման, փորձաքննության անցկացման եւ արտոնագիր տալու հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «ե», «է», «թ», «ժա», «ժբ», «ժթ», «ի», «իա» եւ «ժգ»(եթե վճարվում է «դ» կամ «թ» ենթակետով սահմանված պետական տուրքի հետ միասին) , 2-րդ կետի «ա», «բ», «դ», «ե», «է», «ը», «ժե», «ժզ», «ժէ» եւ «թ»(եթե վճարվում է «դ» ենթակետով սահմանված պետական տուրքի հետ միասին), 7-րդ կետի «ա» եւ 8-րդ կետի «ա», «գ», «դ», եւ «ե» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների եւ արդյունաբերական նմուշների բաժին՝ *ապրանքային նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների, արդյունաբերական նմուշների հայտերի ներկայացման, փորձաքննության անցկացման եւ պահպանական փաստաթղթեր տալու հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի «ա», «բ», «դ», «զ», «է»(եթե վճարվում է «դ» ենթակետով սահմանված պետական տուրքի հետ միասին), «ժգ», «ժդ», «ժե», ենթակետերով, 4-րդ կետի «ա»-«գ», «զ», «է», «ժե»-«ժթ», 5-րդ կետի «ա», «բ», «ե», «զ», «ժ», «ժա» եւ 8-րդ կետի «ա» եւ «գ» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

ֆիրմային անվանումների բաժին՝ *ֆիրմային անվանումների գրանցման հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» եւ 8-րդ կետի «ա» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

պետական գրանցամատյանների բաժին՝ *գրանցամատյանների վարման հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ժգ», «ժէ», «ժը», 2-րդ կետի «թ», «ժգ», «ժդ», 3-րդ կետի «է», «ժա», «ժբ», 4-րդ կետի «թ», «ժ», «ժդ», 5-րդ կետի «ը», «թ», «ժբ», 6-րդ կետի «գ», 7-րդ կետի «դ», 8-րդ կետի «ա», «բ», «է» եւ «ը» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

արտաքին կապերի եւ լիցենզիաների բաժին՝ *օբյեկտների զիջման մասին եւ լիցենզային պայմանագրերի գրանցման հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ժդ»-«ժզ», 2-րդ կետի «ժ»-«ժբ», 3-րդ կետի «ը»-«ժ», 4-րդ կետի «ժա»-«ժգ», 7-րդ կետի «բ»-«դ», 8-րդ կետի «ա» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

բողոքարկման խորհուրդ՝ *բողոքների եւ դիմումների քննարկման հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «գ», «զ», «ը», «ժ», 2-րդ կետի «գ», «զ», 3-րդ կետի «գ», «ե», 4-րդ կետի «դ», «ե», «ը», 5-րդ կետի «գ», «դ», «է», 6-րդ կետի «բ» ենթակետերով սահմանված պետական տուրքերը,*

որակավորման հանձնաժողով՝ *արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննություն ընդունելու համար օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ կետի «զ» ենթակետով սահմանված պետական տուրքը,*

տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին՝ *արտոնագրային տեղեկատվության հետ կապված՝ օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պետական տուրքը:*

8. Եթե արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքի առաջին վճարումը կատարվել է արտոնագիր տալու համար տուրքի հետ միասին, ապա պետական գրանցամատյանների բաժինը, արտոնագիր տալուց առաջ, մեկ անգամ եւս ստուգում է վճարված պետական տուրքի համապատասխանությունը օրենքով սահմանված չափին:

9. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե որեւէ գործողության համար վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում օրենքի 18-րդ հոդվածով սահմանված չափերին, ապա պակաս վճարված պետական տուրքը ենթակա է վճարման՝ այդ մասին Հայարտոնագրի ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Այս դեպքում համապատասխան նյութերն ընդունվում եւ գրանցվում են, իսկ հետագա գործավարությունը կատարվում է միայն պակաս վճարված պետական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրը Հայարտոնագիր ներկայացնելուց հետո:

10. Սույն հրահանգի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված հաշվին վճարված եւ հայտատուի կողմից չօգտագործված պետական տուրքերը (ավել վճարված տուրք, հայտի հետ կանչման դեպքում՝ հետագա գործողությունների համար վճարված պետական տուրք, կամ Հայարտոնագրի կողմից մերժված գործողության կատարման համար նախապես վճարված պետական տուրք եւ այլն) հայտատուի դիմումի համաձայն Հայարտոնագրի ստորաբաժանումները հաշվառում են հայտատուի նշած որեւէ այլ գործողության համար:

Այս դեպքում, եթե պետական տուրքը վճարվել է՝

ա) համապատասխան որոշման կամ հարցման հիման վրա (օրինակ՝ գյուտի արտոնագիր տալու համար՝ արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա, ապրանքային նշանի գրանցման համար՝ ապրանքային նշանի գրանցման մասին որոշման հիման վրա եւ այլն), ապա դրա չափը պետք է համապատասխանի վճարման պահին գործող օրենքով սահմանված չափին.

բ) հայտատուի (արտոնագրատիրոջ, նշանի սեփականատիրոջ եւ այլն) նախաձեռնությամբ որեւէ գործողություն կատարելու համար (օրինակ՝ լիցենզային պայմանագիր գրանցելու, արտոնագիր կամ վկայագիր ստանալու իրավունքը զիջելու մասին դիմում ներկայացնելու եւ այլն), ապա դրա չափը պետք է համապատասխանի համապատասխան գործողություն կատարելու մասին դիմում ներկայացնելու պահին գործող օրենքով սահմանված չափին:

11. Եթե ավել վճարված պետական տուրքի գումարը սույն հրահանգի 10-րդ կետի համաձայն օգտագործվում է արդյունաբերական սեփականության մեկ այլ օբյեկտի իրավական պահպանության հետ կապված որեւէ գործողության համար, ապա այս դեպքում Հայարտոնագրի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը՝

ա) անդորրագրի(բնօրինակի) վրա նշում է այն օբյեկտի (1-ին) հայտի կամ գրանցման համարը, որի նկատմամբ որեւէ գործողություն կատարելու համար օգտագործված է տվյալ անդորրագրով վճարված գումարի մի մասը, նշում է 1-ին օբյեկտի իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար օգտագործված գումարի եւ չօգտագործված մնացորդի չափը,

բ) ստորագրում է եւ նշում թվականը:

Այդպիսի նշումներով անդորրագիրը կցվում է 1-ին օբյեկտի հայտի գործին, իսկ դրա պատճենը ստորաբաժանման դրոշմակնիքով՝ վերադարձվում է հայտատուին՝ հետագայում այլ գործողություն կատարելու մասին դիմումին կից ներկայացնելու համար:

12. Սույն հրահանգի 10-11-րդ կետերում նշված ավել վճարված պետական տուրքի մասին տրված փաստաթուղթը (գրառումներով անդորրագիրը) Հայարտոնագրի ստորաբաժանումներն ընդունում են որպես պետական տուրքի վճարման «բնօրինակ» անդորրագիր եւ, անհրաժեշտության դեպքում, կատարում են սույն հրահանգի 10-րդ կետով նախատեսված նշումները:

13. Պետության կողմից գաղտնի ճանաչված եւ հետագայում գաղտնազերծված գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագիրն ուժի մեջ պահելու համար տարեկան տուրքերը վճարվում են գաղտնազերծման օրվանից սկսած:

Այս դեպքում ոչ լրիվ տարվա համար պետական տուրքը պետք է վճարվի համամասնության սկզբունքով:

Օրինակ՝ գյուտի արտոնագրի գործողության ժամկետի հաշվարկման սկիզբը (այն է՝ հայտի ներկայացման թվականը) համարվում է 14.08.93թ. եւ տվյալ գյուտը գաղտնագրվել է 20.09.93թ. հինգ տարի ժամկետով: Հետագայում՝ 31.05.99թ. գյուտը գաղտնազերծվել է եւ դադարել է պետական գաղտնիք համարվելուց:

Այս դեպքում, այսինքն 31.05.99թ. ընթանում է արտոնագրի գործողության 6-րդ տարին, որի ավարտին մնում է 2 ամիս 14 օր, այսինքն մոտ 2.5 ամիս:

$$\frac{2.5}{12\text{ամիս}\,(1\text{տարի})}\times 30 = 6.25$$

6-րդ տարվա տարեկան պետական տուրքի դրույքաչափը 30 բազային տուրք է, հետեւապես արտոնագրատերը 2.5 ամսվա համար պետք է վճարի՝

բազային տուրք, հետագայում՝ լրիվ տարեկան դրույքաչափերով՝ սկսած 7-րդ տարվանից:

14. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ե» եւ 2-րդ կետի «ե» ենթակետերով նախատեսված՝ գյուտի եւ օգտակար մոդելի նկարագրության հրապարակման համար պետական տուրքերը գանձվում են միայն այդ օբյեկտների նկարագրությունների փաստացի ծավալից ելնելով, հաշվի առնելով նաեւ ամինաթթվային եւ նուկլեոտիդային հաջորդականությունների ցանկը (առանց հավակնության սահմանման եւ գծագրերի): Ընդ որում պետական տուրքի հաշվարկման նպատակով 1 էջ համարվում է 290x210մմ չափերով թերթի վրա 1,5 միջակայքով հայտատուի կողմից տպագրված տեքստը, որն ունի հետեւյալ դաշտերը՝ վերեւից, աջից, ներքեւից՝ 20, ձախից՝ 25մմ: Տառատեսակն ընտրվում է այնպես, որ մեծատառերի բարձրությունը փոքր չլինի 3 միլիմետրից:

15. Գյուտի նախնական արտոնագիր կամ օգտակար մոդելի արտոնագիր տալու դեպքում, երբ Հայարտոնագրի կողմից գյուտի կամ օգտակար մոդելի նկարագրությունը չի հրատարակվում եւ հրապարակման համար օգտագործվում է հայտատուի կողմից ներկայացված նկարագրության պատճենը, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ե» եւ 2-րդ կետի «ե» ենթակետերով նախատեսված տուրքերը չեն գանձվում:

16. Եթե գյուտի հայտի ըստ էության փորձաքննության անցկացման համար որոնման աշխատանքը կատարվում է որոնման միջազգային կազմակերպության կողմից՝ Հայարտոնագրի պատվերով (Հայարտոնագրի կողմից այդ որոնման անցկացման անհնարինության կամ տնտեսապես աննպատակահարմարության դեպքերում), ապա որոնման համար կատարված ծախսերն իրականացվում են օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետով սահմանված տուրքերի գումարների հաշվին: Այս դեպքում վճարման ենթակա պետական տուրքի չափը նվազեցվում է այդ որոնման անցկացման համար Հայարտոնագրի եւ որոնման միջազգային մարմնի միջեւ կնքված պայմանագրով նախատեսված գումարի չափով:

17. Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ֆիզիկական անձինք, սինչեւ 25 աշխատող ունեցող իրավաբանական անձինք գյուտի նախնական արտոնագիր, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու հետ կապված սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «ա»-«ե», «ժա»-«ժդ»,«ժզ»(նախնական արտոնագրի զիջման պայմանագրում փոփոխություն կատարելու մասով), «ժէ»-«ի» ենթակետերով, 2-րդ կետի «ա»-«ե», «է»-«ժ», «ժբ»(արտոնագրի զիջման պայմանագրում փոփոխություն կատարելու մասով), «ժգ»-«ժզ» ենթակետերով, 3-րդ կետի «ա»-«դ», «զ»-«ը», «ժ»(արտոնագրի զիջման պայմանագրում փոփոխություն կատարելու մասով),«ժա»-«ժդ» ենթակետերով նախատեսված պետական տուրքերը, ինչպես նաեւ ապրանքային եւ սպասարկման նշանների(բացառությամբ կոլեկտիվ նշանի) գրանցման եւ վկայական ստանալու հետ կապված՝ սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի «ա»-«ը», «ժ», «ժա», «ժգ» (զիջման պայմանագրում փոփոխություն կատարելու մասով), «ժդ», «ժէ»-«ժբ» ենթակետերով սահմանված պետական տուրքերը վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք՝ 50 տոկոս զեղչով:

Ընդ որում՝ 1-ին կետի «ժբ», 2-րդ կետի «ժե», 3-րդ կետի «ժգ» եւ 4-րդ կետի «ժէ» ենթակետերով զեղչը կիրառվում է, եթե արտոնագիր (վկայական) ստանալու իրավունքը զիջողը եւ այդ իրավունքն ստացողը օգտվում են զեղչով պետական տուրք վճարելու արտոնությունից: Ընդ որում, եթե նրանք համարվում են տարբեր կատեգորիաների հայտատուներ, այսինքն օգտվում են զեղչի տարբեր տոկոսներից, ապա տուրքը վճարվում է զեղչման նվազագույն տոկոսով:

Օրինակ՝ եթե հայտատուն ֆիզիկական անձ է եւ օգտվում է 75% զեղչից, արտոնագիր ստանալու իրավունքը զիջում է որեւէ կազմակերպության, որն ունի 61 աշխատող, ապա այս դեպքում «ժբ» ենթակետով սահմանված պետական տուրքը պետք է վճարվի 50% զեղչով, այսինքն՝ 7.5 բազային դրույքաչափով, քանի որ արտոնագիր ստանալու իրավունքն ստացող կազմակերպությունն օգտվում է 50% զեղչից եւ զեղչման նվազագույն չափը 50% է: Նույն չափի զեղչ կկիրառվեր նաեւ այն դեպքում, երբ այդ կազմակերպությունն արտոնագիր ստանալու իրավունքը զիջեր որեւէ ֆիզիկական անձի (նույնը վերաբերում է նաեւ նշանի վկայական ստանալու իրավունքի զիջմանը):

18. Եթե մինչեւ նախնական արտոնագիր ստանալը(գյուտի պետական գրանցումը) հայտատուն դիմում է ներկայացնում ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին, ապա հայտը դիտարկվում է որպես հիմնական արտոնագրի հայտ, որի հետեւանքով հայտատուն զրկվում է օրենքի 28-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված զեղչերի իրավունքից: Այս դեպքում տվյալ հայտով մինչ այդ վճարված բոլոր պետական տուրքերի զեղչված չափերը ենթակա են վերականգնման:

19. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ժգ», «ժդ», «ժզ», «ժէ», «ժը», «ժթ», «ի» ենթակետերով սահմանված պետական տուրքերի նկատմամբ զեղչերը կիրառվում են միայն նախնական արտոնագրի մասով, հաշվի առնելով սույն հրահանգի 17-րդ կետի պահանջները:

20. Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, լիցենզային պայմանագիր գրանցելու պահից սկսած հետագա տարեկան պետական տուրքերը վճարվում են լրիվ դրույքաչափերով: Այս դեպքում ոչ լրիվ տարվա համար պետական տուրքերի չափերը հաշվարկվում են այնպես, ինչպես նախատեսված է սույն հրահանգի 13-րդ կետով:

21. Եթե պետական տուրքը վճարված է օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված զեղչով, ապա վճարման անդորրագրին պետք է կցվի հայտատուի կողմից տրված տեղեկանք՝ աշխատողների թվաքանակի մասին: Այս դեպքում տվյալ կազմակերպության (իրավաբանական անձի) ղեկավարի ստորագրությունը պետք է վավերացվի կազմակերպության կնիքով: Եթե վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում օրենքով սահմանված չափերին, ապա կիրառվում է օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ծանուցագիր է ուղարկվում հայտատուին՝ պակաս վճարված պետական տուրքը երկամսյա ժամկետում վճարելու մասին: Այսպիսի դեպքերում աշխատողների թվաքանակի մասին տեղեկանքի բացակայությունը չի կարող հիմք ծառայել հարցման համար, այսինքն՝ եթե նույնիսկ վճարված պետական տուրքի գումարը հավասար է համապատասխան պետական տուրքի զեղչված դրույքաչափին, համարվում է, որ վճարված պետական տուրքը չի համապատասխանում սահմանված չափին:

22. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան արտոնագրատիրոջ կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքը ցանկացած այլ անձի տալու պատրաստակամության մասին հայտարարության հրապարակումից հետո տրված յուրաքանչյուր լիցենզիայի համար դրան հաջորդող տարվանից արտոնագիրն ուժի մեջ պահելու պետական տուրքը նվազեցվում է 10 տոկոսով, բայց 50 տոկոսից ոչ ավելի: Այսինքն, եթե այդպիսի հայտարարության հրապարակումից հետո կնքվում է մեկ լիցենզային պայմանագիր, ապա դրան հաջորդող տարվանից սկսած տարեկան պետական տուրքը վճարվում է 10 տոկոս զեղչով՝ մինչեւ նշված պայմանագրի գործողության ժամկետի ավարտը: Նմանատիպ այլ պայմանագիր կնքելու դեպքում յուրաքանչյուրի նկատմամբ կիրառվում է 10 տոկոս զեղչման պահանջը, հաշվի առնելով, որ զեղչման ընդհանուր չափը չի կարող գերազանցել 50%-ից: Այսինքն, եթե տվյալ տավա մեջ գործում են հինգ եւ ավելի լիցենզային պայմանագրեր, ապա զեղչման տոկոսը մնում է անփոփոխ՝ 50:

23. Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան գյուտի եւ օգտակար մոդելի նկարագրության հրապարակման համար՝ 5 էջից ավելի յուրաքանչյուր էջի համար սահմանված տուրքերը ենթակա են վճարման արտոնագիր տալու համար սահմանված պետական տուրքի հետ մեկտեղ:

24. Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան, եթե արտոնագիր տալու համար պետական տուրքը վճարվել է սահմանված ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում՝ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 50 տոկոսով ավելացված դրույքաչափով, ապա դրա հետ մեկտեղ վճարման ենթակա այլ պետական տուրքերի (օրինակ՝ նկարագրության հրապարակման համար եւ արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքերի) դրույքաչափերը չեն փոխվում:

25. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետի համաձայն, վճարված պետական տուրքը ենթակա է վերադարձման, եթե մինչեւ համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրք վճարողը հրաժարվում

է համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տեւական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը: Տեւական բնույթ կրող գործողություն է ճանաչվում գյուտի ըստ էության փորձաքննությունը, ապրանքային նշանի փորձաքննությունը, ապրանքի ծագման տեղանվան փորձաքննությունը, որոնք սկսված են համարվում հայտը (կամ գյուտի ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին դիմումը) քննարկման ընդունելու մասին փաստաթուղթը (համապատասխան ստորաբաժանման որոշում, տեղեկանք, ծանուցագիր եւ այլն) հայտատուին կամ համապատասխան շահագրգիռ անձին հանձնելու կամ առաքելու պահից:

26. Հայարտոնագրի ստորաբաժանումները գանձված տուրքերի հաշվառումն իրականացնում են ըստ տուրքերի վճարման անդորրագրերի ստացման թվականի եւ յուրաքանչյուր ամսվա համար, մինչեւ հաջորդ ամսվա 10-ը, գանձված տուրքերի մասին ամփոփ տվյալներ են ներկայացնում ֆինանսատնտեսական բաժին՝ համապատասխան իրավասու մարմիններ հաշվետվություն ներկայացնելու համար:

27. Օբյեկտների լիցենզային կամ զիջման պայմանագրերի գրանցման համար գանձված տուրքերի հաշվառումն իրականացվում է արտաքին կապերի եւ լիցենզիաների բաժնի կողմից՝ ըստ գրանցամատյանում համապատասխան գրառման թվականի:

28. Լիցենզային կամ զիջման պայմանագրի գրանցման հետ կապված պետական գրանցամատյաններում կատարվող գրառումների համար պետական տուրքեր չեն գանձվում:

29. Պահպանական փաստաթղթի սեփականատիրոջ դիմումի համաձայն պետական գրանցամատյաններում եւ համապատասխան պահպանական փաստաթղթի մեջ յուրաքանչյուր փոփոխություն կատարվում է միայն դրա համար սահմանված պետական տուրքի վճարման դեպքում: Մի քանի փոփոխություն կատարելու մասին դիմում ներկայացնելու դեպքում, պետական տուրքերը վճարվում են յուրաքանչյուր փոփոխության համար առանձին հաշվարկից ելնելով:

Պահպանական փաստաթղթի սեփականատիրոջ բաժանման (դրա մի մասի առանձնացման) կամ այլ իրավաբանական անձի հետ նրա միաձուլման հետեւանքով սեփականատիրոջ փոփոխությունը դիտվում է որպես գրանցամատյանում եւ համապատասխան պահպանական փաստաթղթի մեջ կատարվող մեկ փոփոխություն, որը ենթադրում է տվյալ սեփականատիրոջ անվանման եւ հասցեի փոխարինումը նոր սեփականատիրոջ անվանմամբ եւ նրա հասցեով:

30. Տուրքերի վճարման անդորրագրերը պահպանվում են համապատասխան օբյեկտի «գործի» թղթապանակում, իսկ տվյալները՝ էլեկտրոնային հիմնապաշարներում:

31. Արտոնագրային տեղեկատվության եւ այլ գործողությունների համար գանձվող պետական տուրքերը հաշվառում են հետեւյալ կերպ՝

ա) տեղեկատվության յուրաքանչյուր էջի համար տեղեկատվական նյութերի հանձնումն իրականացվում է միայն ըստ Հայարտոնագրի համապատասխան բաժիններում գրանցված դիմումների, որոնց կցվում են սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագրերը:

բ) մնացած գործողությունները կատարվում են գրավոր դիմումների (դրանք գրանցվում են ընդհանուր բաժնում) կամ միջազգային պայմանագրերի համաձայն:

Եթե գործողությունը կատարվում է գրավոր դիմումի համաձայն, պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է դիմումին:

Եթե գործողությունը կատարվում է միջազգային պայմանագրի շրջանակներում, ապա պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է տվյալ օբյեկտի հայտի նյութերին:

Գրանցված է
ՀՀ Արդարադատության
նախարարության կողմից
28.09.2001թ., №30101154

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11 *արտոնագրի համարը*
13 *փաստաթղթի տեսակի կոդը*
A1 *գյուտի հիմնական արտոնագիր*
A2 *գուտի նախնական արտոնագիր*
B2 *նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
21 *հայտի համարը*
22 *հայտի ներկայացման թվականը*
23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
31 *առաջնային հայտի համարը*
32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54 *գյուտի անվանումը*
56 *տեղեկատվության աղբյուրներ*
57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
71 *հայտատուն, երկրի կոդը*
72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74 *արտոնագրային հավատարմատար*
85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 **A01G 17/08** (11) **1140** (13) **A2**
B65H 1/08
B65G 59/02
(21) P20010103 (22) 20.08.2001
(42) 20.11.2001
(72) Մանուկ Մանուկյան (AM)
(71) Մանուկ Մանուկյան (AM)
(73) Մանուկ Մանուկյան, Երեւան, Պարոնյան 6, բն. 13 (AM)
(54) **Բույսերի ճյուղերը հենալարերին կապելու սարք եւ կապող տարր**
(57) Գյուտերի խումբը վերաբերում է երկար ճողաձեւ տարրերը հենալարերին կապելու պրոցեսը մեքենայացնող ձեռքի սարքերին:

Սարքի բաղկացուցիչ մասերն են բռնակը, կապող տարրերի պահեստախցիկը եւ վերջինից կապող տարրերի արտաշարժի ելքային խոռոչները, որոնք իրականացված են դեպի ելքը միմյանց նկատմամբ հակառակ ուղղություններով սահուն շեղվող ակոսների տեսքով: Պահեստախցիկում հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորությամբ տեղադրված հենահարթակի վրա զետեղված է կապող տարրերի տրցակը: Բռնակի խոռոչում տեղադրված լծակի վերին ծայրը փոխազդում է հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորությամբ տեղադրված հրիչի հետ, որին մի ծայրով հորիզոնական հոդակապով ամրացված է լեզվակը: Լեզվակի մյուս ծայրը իրականացված է երկաստիճան, եւ նրա առաջընթացիկ ճակատը զետեղված է արտաշարժվող կապող տարրի մակերեսի վրա: Ելքային խոռոչների վերեւում տեղադրված են ճոճալծակները, որոնց առջեւի ծայրերը վրաձածկում են ակոսների հունը, իսկ հետեւի ծայրերը հպվում են արտաշարժվող կապող տարրին՝ նրա հետեւի եզրամասում:

Կապող տարրը էլիպսաձեւ տափօղակ է, որի մեծ առանցքին զուգահեռ երկայնական պատերից մեկը փոքր առանցքին հարող մասում խզված է եւ ունի երկու, մեծ առանցքին չհասնող կտրվածքներ, որոնք փոքր առանցքին զուգահեռ են եւ զետեղված են կողային պատերի եզրամասում:

Սարքը եւ կապող տարրը ապահովում են կապելու ժամանակ բույսերի ճյուղերի չվնասելը եւ փոքրացնում ձեռքի լարումը սարքի օգտագործման ժամանակ, 2 անկախ կետ, 15 նկ.:

---

(51) 7 **A23L 3/54** (11) **1141** (13) **A2**
F26B 20/00
(21) P20010109 (22) 27.08.2001
(42) 20.11.2001
(72) Կարեն Ղուլղազարյան (AM), Յուրիկ Սաֆարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)
(54) **Բարձրահաճախական չորանոց**
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրոնիկայի բնագավառին: Սարքը նախատեսված է բարձրահաճախական էլեկտրամագնիսական տատանումների օգնությամբ տարբեր տեսակի նյութերի, այդ թվում նաեւ սննդամթերքի չորացման համար:

Սարքն ունի աշխատանքային խցիկ եւ բարձրահաճախական գեներատոր իր էլեկտրոնային լամպով եւ տատանողական հաղորդաշղթա կազմող ինդուկտիվ կոճով ու կոնդենսատորով: Ընդ որում, աշխատանքային խցիկը միացված է գեներատորի տատանողական հաղորդաշղթային ազդանշանի ամբողջ թվով կեսալիքի երկարություն ունեցող կաբելի հատվածով:

Լայնանում են սարքի օգտագործման հնարավորությունները, 1նկ.:

---

(51) 7 **A61B 5/02** (11) **1142** (13) **A2**
(21) P20010135 (22) 01.11.2001
(42) 20.11.2001
(72) Ռաֆայել Ստամբոլցյան (AM), Ռուզաննա Մայրապետյան (AM)
(71) Ռաֆայել Ստամբոլցյան (AM), Ռուզաննա Մայրապետյան (AM)

(73) Ռաֆայել Ստամբոլցյան, Երեւան, Ջրաշատ 50, բն. 7 (AM), Ռուզաննա Մայրապետյան, Երեւան, Ավետ Ավետիսյանի 1, բն. 24 (AM)

(54) **Սրտամկանի տարբեր հատվածների իշեմիկ ախտահարումների ֆունկցիոնալ բնութագրի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է սրտաբանությանը, մասնավորապես, սրտամկանի տարբեր հատվածների իշեմիկ ախտահարումների ֆունկցիոնալ բնութագրի որոշման եղանակներին:

Կիրառելով էլեկտրասրտագրի քանակական վերլուծության ինտեգրալային եղանակը, որոշում են կրծքային արտածումներում ամեն մի կոնկրետ դեպքում նորմայից շեղումը եւ դրա չափը: Ապա հետազոտվող հիվանդների նկատմամբ կիրառում են բեռնվածության փորձ՝ 300-600կգմ/րոպե չափով, եւ ստացված էլեկտրասրտագրի ցուցանիշները համադրում նախապես ստացված ցուցանիշների հետ: Համադրական վերլուծությունը հնարավորություն է տալիս հայտնաբերելու իշեմիկ ախտահարման տարբեր աստիճանի տեղային ախտաբանական հատվածներ:

Ապահովվում է սրտամկանի տարբեր հատվածների իշեմիկ ախտահարումների ֆունկցիոնալ բնութագրի որոշման եղանակի բարձր արդյունավետությունը եւ բուժման ճիշտ ընտրությունը:

---

(51) 7 **A61B 8/00** (11) **1143** (13) **A2**
(21) P20010160 (22) 18.12.2001
(42) 15.02.2002

(72) Մարգար Մարտիրոսյան (AM)
(71) Մարգար Մարտիրոսյան (AM)
(73) Մարգար Մարգարյան, Երեւան, Նորքի 5-րդ զանգված 27, բն. 13 (AM)

(54) **Գանգուղեղային ախտաբանության հիվանդների նեյրոսոնոգրային բազմակի հետազոտման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ գանգուղեղային ախտաբանությամբ հիվանդների նեյրոսոնոգրային բազմակի հետազոտման եղանակներին:

Գանգաթաղի որոշակի մասում կատարում են 2-2,5սմ տրամագծով ֆրեզային անցք, ստացված աուտոսոկրափշրանքը մանրատում են մինչեւ խարտուկի աստիճան, շաղախում հիվանդի 1մլ արյունով, անմիջապես լցնում կատարված անցքի մեջ պինդ ուղեղաթաղանթի վրա, ապա վերքը շերտ առ շերտ կարում: Այդպիսով, ստանում են արհեստական գաղտուն, որը ծառայում է որպես անդրաձայնային «պատուհան» նեյրոսոնոգրային բազմակի հետազոտման համար: 3-6 ամիս անց այն ինքնափակվում է:

Բարձրացվում է գանգուղեղային հիվանդությունների բուժման արդյունավետությունը նեյրոսոնոգրային բազմակի հետազոտման միջոցով:

---

(51) 7 **A61B 17/00** (11) **1144** (13) **A2**
A61M 29/00
(21) P20010163 (22) 21.12.2001
(42) 15.02.2002

(72) Կարլոս Դանիելյան (AM)
(71) Կարլոս Դանիելյան (AM)
(73) Կարլոս Դանիելյան, Երեւան, Այգեձոր 40 (AM)

(54) **Լայնիչների լրակազմ ըստ Դանիելյանի**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ գինեկոլոգիայում օգտագործվող լայնիչների լրակազմերին:Առաջարկվում է լայնիչների լրակազմ, որում յուրաքանչյուր լայնիչի ծողի աշխատանքային մասը կոնաձեւ է, ընդ որում կոնաձեւ մասի ծայրի տրամագիծը փոքր է հետին մասի տրամագծից: Յուրաքանչյուր հաջորդ ծողի աշխատանքային մասի ծայրի տրամագիծը հավասար է նախորդ ծողի աշխատանքային մասի մեծ տրամագծին: Ապահովվում է գինեկոլոգիական վիրահատումների անցավությունը:

---

(51) 7 **A61B 17/36** (11) **1145** (13) **A2**
(21) P20010108 (22) 27.08.2001
(42) 20.11.2001

(72) Կարեն Ղուլղազարյան (AM), Յուրիկ Սաֆարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)

(54) **Համալարելի կոագուլյատոր**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրոնիկայի բնագավառին: Սարքը նախատեսված է գերբարձր հաճախական (ԲՀ) ազդանշանների օգնությամբ վիրաբուժական գործողություններ՝ կոագուլյացիա (մակարդում), հյուսվածքների կտրում եւ այլ գործողություններ կատարելու համար:

Սարքն ունի երկու ուսնակային բացակով ռեզոնատոր: Բացակներից մեկի մեծությունը կառա-

վարվում է մեմբրանով, որին ամրակցված է մոդուլման հանգույցի կոճը: Մյուս ունակային բացակի տեղամասում ռեզոնատորի ներքին հաղորդաճողին ամրացված է լրացուցիչ հաղորդաճող, որը դուրս է գալիս ռեզոնատորի խոռոչից նրա ստորին պատի անցքից: Ռեզոնատորի խոռոչի ներսում տեղադրված է տրանզիստոր, որի էլեկտրոդները կապի օղակներով եւ միջանցիկ կոնդենսատորներով դուրս են բերված ռեզոնատորից, 1նկ.:

---

(51) 7 **A61F 13/12** (11) **1146** (13) **A2**
(21) P20020024 (22) 18.02.2002
(42) 15.03.2002
(72) Աշոտ Բախշեցյան (AM)
(71) Աշոտ Բախշեցյան (AM)
(73) Աշոտ Բախշեցյան, Երեւան, Բաղրամյան 2, բն. 66 (AM)

(54) **Պարանոցի սեւեռիչ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, պարանոցի սեւեռիչին, որը կարող է օգտագործվել ինչպես ծուռվզության ոչ վիրահատական բուժման դեպքում, այնպես էլ վզի հետվիրահատական շրջանում: Սեւեռիչն ունի պարանոցն ընդգրկող ճկուն տարր, որը պատրաստված է երկու՝ զուգահեռ տեղակայված կազմովի աղեղնաձեւ մետաղյա թիթեղից, որոնցից յուրաքանչյուրն ունի մեկը մյուսին հոդակապորեն կապված՝ կենտրոնական, միջին եւ ծայրային տարրեր: Սեւեռիչն ունի թիթեղների միջեւ հեռավորության կարգավորման երկու մեխանիզմ: Յուրաքանչյուր մեխանիզմն ունի մեկը մյուսին հոդակապորեն կապված երկու լծակ, որոնցից յուրաքանչյուր լծակի մյուս ծայրը հոդակապորեն կապված է համապատասխան կազմովի թիթեղի միջին տարրի հետ, եւ պտուտակային մեխանիզմ, որը տեղակայված է երկու բարձակի անցքերում: Բարձակներից մեկը կոշտ միակցված է կազմովի թիթեղների ծայրային տարրերին, իսկ մյուսը կապված է լծակները կապող հոդակապի առանցքի հետ: Ապահովվում է սեւեռիչի համապիտանիությունը՝ տարբեր կառուցվածքի պարանոցների համար օգտագործելու հնարավորությամբ, 2 նկ.:

---

(51) 7 **B01D 15/08** (11) **1147** (13) **A2**
G01N 30/60
(21) P20000123 (22) 28.12.2000
(72) Սերգեյ Ներսիսյան (AM)
(71) Սերգեյ Ներսիսյան (AM)
(73) Սերգեյ Ներսիսյան, Երեւան, Այգեստանի 1-ին փ. 30 (AM)

(54) **Սյունակային քրոմատագրության միջոցով խառնուրդների տարանջատման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիական տեխնոլոգիական պրոցեսներին, մասնավորապես՝ խառնուրդների տարանջատմանը: Տարանջատման ենթակա խառնուրդը լուծում են լուծիչում (օրինակ, էթիլացետատում) եւ տեղադրում չոր սյունակի մեջ, որտեղ կատարվում է տարանջատում հայտնի մեթոդով, ընդ որում, սյունակի մեկնարկային եւ սյունակային մասերի տրամագծերի հարաբերակցությունը 1:(1,5-2,5) է: Փոքրանում է տարանջատված նյութերի շերտերի լայնությունը եւ, համապատասխանաբար, բարձրանում է տարանջատման արդյունավետությունը:

---

(51) 7 **B01D 15/08** (11) **1148** (13) **A2**
G01N 30/60
(21) P20000121 (22) 28.12.2000
(72) Սերգեյ Ներսիսյան (AM)
(71) Սերգեյ Ներսիսյան (AM)
(73) Սերգեյ Ներսիսյան, Երեւան, Այգեստանի 1-ին փ. 30 (AM)

(54) **Սյունակային քրոմատագրության միջոցով խառնուրդների տարանջատման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիական տեխնոլոգիական պրոցեսներին, մասնավորապես՝ խառնուրդների տարանջատմանը: Կլանիչի մի մասը նախապես ակտիվազերծում են 17,5-18,5 % ջրով, որից հետո կլանիչի այդ մասի վրա տեղափոխում են տարանջատվող խառնուրդի նմուշը եւ ներմուծում սյունակի մեջ, ապա կատարում են տարանջատումը: Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, փոքրանում են տարանջատված նյութերի կորուստները:

---

(51) 7 **B01D 15/08** (11) **1149** (13) **A2**
G01N 30/60
(21) P20000122 (22) 28.12.2000
(42) 27.05.2001
(72) Սերգեյ Ներսիսյան (AM)
(71) Սերգեյ Ներսիսյան (AM)
(73) Սերգեյ Ներսիսյան, Երեւան, Այգեստանի 1-ին փ. 30 (AM)

(54) **Պրեպարատիվ նրբաշերտ քրոմատագրության միջոցով խառնուրդների տարանջատման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիական տեխնոլոգիական պրոցեսներին, մասնավորապես՝ խառնուրդների տարանջատմանը: Տարանջատումն իրականացնում են հետեւյալ կերպ. պատրաստում են կլանիչի անհրաժեշտ հաստություն ունեցող շերտ, թիթեղը մեկնարկի կողմից իջեցնում են օսլայի 0,1%-անոց լուծույթի մեջ այնքան ժամանակով, մինչեւ լուծիչի ճակատը բարձրանա 1,5-2 սմ-ով: Շերտը չորացնում են եւ ակտիվացնում հայտնի եղանակով: Ստացվում է չամրացված շերտով թիթեղ, որի մեկնարկային մասում գտնվում է մոտ 2 սմ լայնություն ունեցող ամրացված շերտ: Այդ շերտի վրա բազմակի տեղադրումից հետո խառնուրդի շերտը կիզակետում են բարձր բեւեռայնություն ունեցող լուծիչով (օրինակ, մեթանոլով) եւ այնուհետեւ կատարում խառնուրդի տարանջատումը չամրացված շերտի վրա:

Գյուտը հնարավորություն է տալիս տարանջատել խառնուրդների մեծ քանակություններ, փոքրացնել տարանջատված նյութերի շերտերի լայնությունը:

---

(51) 7 **B02C 25/00** (11) **1150** (13) **A2**
(21) P20010151 (22) 30.11.2001
(42) 15.02.2002

(72) Մարինկա Բաղդասարյան (AM)

(71) Մարինկա Բաղդասարյան (AM)

(73) Մարինկա Բաղդասարյան, Երեւան, Գյուլբենկյան 24, բն. 70 (AM)

(54) **Հանքաքարի մանրացման փակ ցիկլով տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը, մասնավորապես, աղացում հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակին:

Գյուտի էությունն այն է, որ մատակարարվող հանքաքարի չափագրական կազմի, օգտակար բաղադրիչի քանակի, աղացում եւ դասակարգչում խյուսի խտությունների, դասակարգչի մուտքում ու ելքում խյուսի չափագրական կազմի ու դասակարգչից աղաց վերադարձող խյուսի քանակի չափումների արդյունքներով անալոգաթվանշանային եւ թվանշաանալոգային կերպափոխիչներով հաշվիչ բլոկում որոշում է մատակարարվող հանքաքարի ծախսի, աղացում եւ դասակարգչում ջրի ծախսերի եւ աղացի լցման աստիճանի լավարկված արժեքները եւ փոխանցում կարգավորող բլոկներին:

Բարձրացվում են կառավարվող գործոնների ճշտությունն եւ արդյունավետությունը, 1 նկ.:

---

(51) 7 **B02C 25/00** (11) **1151** (13) **A2**
(21) P20010153 (22) 30.11.2001
(42) 15.02.2002

(72) Մարինկա Բաղդասարյան (AM)

(71) Մարինկա Բաղդասարյան (AM)

(73) Մարինկա Բաղդասարյան, Երեւան, Գյուլբենկյան 24, բն. 70 (AM)

(54) **Հանքաքարի մանրացման փակ ցիկլով տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը, մասնավորապես, հանքաքարի մանրացման փակ ցիկլով տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգին եւ կարող է կիրառվել հանքահարստացման, քիմիական եւ շինանյութերի արդյունաբերության մեջ: Գյուտի էությունն այն է, որ հանքաքարի մանրացման գործընթացի ավտոմատ կառավարման համակարգը դասակարգիչից աղաց վերադարձվող նյութի քանակի տվիչի, համեմատիչի եւ ուժեղացուցիչի միջոցով սեւեռելով դասակարգիչից աղաց վերադարձվող նյութի քանակի յուրաքանչյուր փոփոխություն, այն փոխանցում է նոր չափումներ կատարելու համար մանրացվող հանքաքարի չափագրական կազմի, օգտակար բաղադրիչի քանակի, դասակարգչի մուտքի ու ելքի չափագրական կազմի տվիչներին: Այդ չափման արդյունքներով հաշվիչ բլոկը որոշում է կարգավորվող պարամետրերի լավարկված արժեքներն ու դրանք փոխանցում կարգավորող բլոկներին:

Ընդլայնվում են շահագործման հնարավորությունները, բարձրացվում են կառավարման ճշտությունն եւ տեխնոլոգիամիտությունը, 1 նկ.:

---

(51) 7 **B02C 25/00** (11) **1152** (13) **A2**
(21) P20010152 (22) 30.11.2001
(42) 15.02.2002

(72) Մարինկա Բաղդասարյան (AM)

(71) Մարինկա Բաղդասարյան (AM)

(73) Մարինկա Բաղդասարյան, Երեւան, Գյուլբենկյան 24, բն. 70 (AM)

(54) **Հանքաքարի մանրացման փակ ցիկլով տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը, մասնավորապես, աղացում հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակին եւ կարող է կիրառվել հանքահարստացման, քիմիական եւ շինանյութերի արդյունաբերության մեջ:

Գյուտի էությունն այն է, որ որպես լավարկման չափանիշներ օգտագործելով պատրաստի նյութի առավելագույն ելքի ու օգտակար բաղադրիչի առավելագույն եւ էլեկտրաէներգիայի տեսակարար ծախսի նվազագույն արժեքները, մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի կիրառման արդյունքում ստացված լավարկված արժեքներով կառավարում են մատակարարվող հանքանյութի, աղացի եւ դասակարգչի խյուսի խտությունների քանակները եւ աղացի լցման աստիճանը: Բարձրացվում է կառավարման արդյունավետությունը, 1 նկ.:

---

(51) 7 **C01B 33/14** (11) **1153** (13) **A2**
B01D 15/08
(21) P20010139 (22) 13.11.2001
(42) 15.02.2002
(72) Սերգեյ Հայրապետյան (AM), Սուրեն Մարգարյան (AM)
(71) Սերգեյ Հայրապետյան (AM)
(73) Սերգեյ Հայրապետյան, Երեւան, Չեռնիշեւսկու 58, բն. 1 (AM)
(54) **Սիլիկազոլի հիման վրա քրոմատագրության համար միկրոգնդային սիլիկաժելի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ հեղուկային քրոմատագրության համար անօրգանական սորբենտների ստացման եղանակներին:

Բազմասիլիկաթթուն համակարգի նյութափոխանակորեն կայուն գոտում (pH 8,5-10,5) ենթարկում են աճեցման, որից հետո ստացված սիլիկազոլի մեջ ներմուծում են բազմասիլիկաթթու եւ կալիումի սիլիկատ, խառնուրդն էմուլսացնում, դոնդողացնում, ստացված հիդրոժելը 30 րոպեի ընթացքում լրացուցիչ մշակում՝ 80°C ջերմաստիճանում:

Եղանակը թույլ է տալիս ստանալ միկրոգնդային սիլիկաժելների լայն տեսականի՝ կառուցվածքային եւ քրոմատագրական վերարտադրելի բնութագրերով:

---

(51) 7 **C07C 69/74** (11) **1154** (13) **A2**
(21) P20010130 (22) 18.10.2001
(42) 18.12.2001
(72) Աիդա Ավետիսյան (AM), Արմենակ Մարգարյան (AM), Գայանե Թոքմաջյան (AM), Ռուզաննա Փիրիջանյան (AM)
(71) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ) (RU), Երեւանի պետական համալսարան (ԵՊՀ) (AM)
(73) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուգանսկայա 9, փ/ա 25 (RU), Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)
(54) **Պերմետրինաթթվի էսթերի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ պերմետրինաթթվի էթիլ էսթերի ստացման եղանակին, որը կարող է կիրառվել ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության մեջ, որպես մակաբույծների դեմ արդյունավետ միջոց: Պերմետրինաթթվի էթիլ էսթերը ստանում են 3-(2',2'-երկքլորէթենիլ)-4-քլոր-4-մեթիլպենտանաթթվի էթիլ էսթերը ենթարկելով ցիկլացման չոր նատրիումի երրորդային բուտիլատի առկայությամբ, որն ավելացնում են փոքր չափաբաժիններով: Բարձրանում են եղանակի ստերեոընտրողականությունը եւ վերջնանյութի ելքը:

---

(51) 7 **C07F 5/06** (11) **1155** (13) **A2**
C14C 3/08
(21) P20010095 (22) 30.07.2001
(42) 17.10.2001
(72) Սոկրատ Մարգարյան (AM), Մանուկ Մարգարյան (AM)
(71) Սոկրատ Մարգարյան (AM)
(73) Սոկրատ Մարգարյան, Երեւան, Գոգոլի 85, բն. 32 (AM)
(54) **Ալյումինիումի սուլֆատի հետ հեքսամեթիլեներկամինի կոմպլեքսի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ալյումինիումի սուլֆատի հետ հեքսամեթիլեներկամինի կոմպլեքսի ստացմանը, որը կարող է կիրառվել կաշվի արտադրության մեջ՝ որպես դաբաղիչ: Կոմպլեքսը ստանում են հետեւյալ կերպ՝ ալյումինիումի սուլֆատը փոշի վիճակում խառնում են հալված հեքսամեթիլեներկամինի հետ 88-92°C ջերմաստիճանում մինչեւ համասեռ մածուցիկ զանգվածի ստանալը, չորաց-

նում այն, որից հետո տրորում մինչեւ փոշիացումը: Եղանակը պարզ է, իսկ ստացված կոմպլեքսով կաշիների դաբաղումը բարելավում է դրանց բնութագրական ցուցանիշները:

---

(51) 7 **C08F 20/06** (11) **1156** (13) **A2**
(21) P20010112 (22) 30.08.2001
(42) 20.11.2001
(72) Մեժլում Երիցյան (AM), Ռայա Քարամյան (AM), Գայանե Գալստյան (AM), Լեւոն Երիցյան (AM), Վլադիմիր Բաղալյան (AM), Կարեն Պողոսյան (AM), Նադեժդա Երիցյան (AM), Թորգոմ Ներսիսյան (AM), Կարեն Երիցյան (AM)
(71) Մեժլում Երիցյան (AM)
(73) Մեժլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն.17(AM)
(54) **Ջրակլանող եւ ջրապահող համապոլիմերի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ակրիլաթթվի, դրա նատրիումական աղի եւ 1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղի ջրակլանող համապոլիմերների ստացման եղանակին եւ կարող է կիրառվել դրա հիման վրա ջրակլանող բաղադրանյութի ստացման համար:

Մոնոմերները՝ ակրիլաթթուն, դրա նատրիումական աղը եւ 1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղը, ջրային միջավայրում տաքացման պայմաններում ենթարկում են համապոլիմերացման, ջրում լուծվող հարուցիչի՝ ամոնիումի պերսուլֆատի եւ ամոնիումային ակտիվարարի՝ ամոնիումի քլորիդի առկայությամբ: Պրոցեսն իրականացնում են (ակրիլաթթու+ակրիլաթթվի նատրիումական աղ):1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղ 11,44:(0,435–1,16) զանգվ. հարաբերակցությամբ:

Պարզեցվում է համապոլիմերի ստացման եղանակը, բարձրանում են դրա ջրակլանող եւ ջրապահող հատկությունները:

---

(51) 7 **C08F 20/06** (11) **1157** (13) **A2**
C08L 33/08
(21) P20010114 (22) 30.08.2001
(42) 01.11.2001
(72) Մեժլում Երիցյան (AM), Ռայա Քարամյան (AM), Ռոբերտ Յադոյան (AM), Լեւոն Երիցյան (AM), Կարեն Պողոսյան (AM), Նադեժդա Երիցյան (AM), Թորգոմ Ներսիսյան (AM)
(71) Մեժլում Երիցյան (AM)
(73) Մեժլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն. 17 (AM)
(54) **Ջրակլանող բաղադրանյութի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ակրիլաթթվի, դրա նատրիումական աղի, ակրիլամիդի եւ 1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղի ջրակլանող համապոլիմերների հիման վրա ջրակլանող բաղադրանյութի ստացման եղանակին:

Համապոլիմերի ջրային դոնդողը սենյակային ջերմաստիճանում ինտենսիվորեն խառնում են տարբեր տիպի հողերի հետ մինչեւ համասեռ զանգված ստանալը: Պրոցեսն իրականացնում են համապոլիմեր : հող : ջուր՝ (1-1,5) : 70,0 : 100 զանգվ. հարաբերակցությամբ:

Պարզեցվում է բաղադրանյութի ստացման եղանակը, բարձրանում է դրա ջրակլանող հատկությունը:

---

(51) 7 **C08F 20/06** (11) **1158** (13) **A2**
C08L 33/08
(21) P20010115 (22) 30.08.2001
(42) 20.11.2001
(72) Մեժլում Երիցյան (AM), Կարեն Երիցյան (AM), Լեւոն Երիցյան (AM), Ռոբերտ Յադոյան (AM)
(71) Մեժլում Երիցյան (AM)
(73) Մեժլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն. 17 (AM)
(54) **Ջրակլանող համապոլիմերի եւ դրա հիման վրա ջրակլանող բաղադրանյութի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ակրիլաթթվի, դրա նատրիումական աղի, ակրիլամիդի, N1N1-մեթիլենբիսակրիլամիդի եւ N1N1-մեթիլենբիսալիլամոնիումի քլորիդի ջրակլանող համապոլիմերների ստացման եղանակին եւ դրա հիման վրա ջրակլանող բաղադրանյութի ստացման եղանակին:

Մոնոմերները՝ ակրիլաթթուն, դրա նատրիումական աղը, ակրիլամիդը, N1N1-մեթիլենբիսակրիլամիդը եւ N1N1-մեթիլենբիսալիլամոնիումի քլորիդը, ջրային միջավայրում տաքացման պայման-

ներում ենթարկում են համապոլիմերացման ջրում լուծվող հարուցիչի՝ ամոնիումի պերսուլֆատի եւ հակաադհեզային հավելույթի՝ սիլիկոնային յուղի առկայությամբ: Պրոցեսն իրականացնում են (ակրիլաթթու + ակրիլաթթվի նատրիումական աղ) : ակրիլամիդ : N1N1 –մեթիլենբիսակրիլամիդ : N1N1-մեթիլենբիսալիլամոնիումի քլորիդ (7,32 – 7,67) : (1,42 –2,13) : (0,015-0,03) : (0,019-0,038) զանգվ. հարաբերակցությամբ:

Համապոլիմերի ջրային դոնդողը սենյակային ջերմաստիճանում ինտենսիվորեն խառնում են տարբեր տիպի հողերի հետ մինչեւ համասեռ զանգված ստանալը: Պրոցեսն իրականացնում են համապոլիմեր : հող : ջուր՝ (0,2-0,41) : 41,0 : (58,6 – 58,8) զանգվ. հարաբերակցությամբ:

Պարզեցվում են համապոլիմերի եւ բաղադրանյութի ստացման եղանակները, բարձրանում է դրանց ջրակլանող հատկությունը, 2 անկախ կետ:

---

(51) 7 **C08F 20/06** (11) **1159** (13) **A2**
(21) P20010113 (22) 30.08.2001
(42) 20.11.2001

(72) Մեժլում Երիցյան (AM), Ռայա Քարամյան (AM), Լեւոն Երիցյան (AM), Ռոբերտ Յադոյան (AM), Կարեն Պողոսյան (AM), Նաղեժդա Երիցյան (AM), Թորգոմ Ներսիսյան (AM), Նաիրա Ավդալյան (AM)

(71) Մեժլում Երիցյան (AM)

(73) Մեժլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն. 17 (AM)

(54) **Ջրակլանող համապոլիմերի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերայն քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ակրիլաթթվի, դրա նատրիումական աղի, ակրիլամիդի եւ 1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղի ջրակլանող համապոլիմերի ստացման եղանակին եւ կարող է կիրառվել դրանց հիման վրա ջրակլանող բաղադրանյութերի ստացման համար:

Մոնոմերները՝ ակրիլաթթուն, դրա նատրիումական աղը, ակրիլամիդը եւ 1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղը ջրային միջավայրում, տաքացման պայմաններում ենթարկում են համապոլիմերացման, ջրում լուծվող հարուցիչի՝ ամոնիումի պերսուլֆատի եւ ամոնիումային ակտիվարարի՝ ամոնիումի քլորիդի առկայությամբ: Պրոցեսն իրականացնում են (ակրիլաթթու + ակրիլաթթվի նատրիումական աղ): ակրիլամիդ : (1,3-երկալիլիզոցիանուրաթթվի նատրիումական աղ 78,6 : (14,2 –35,5) : (0,034-3,47) զանգվ. հարաբերակցությամբ:

Պարզեցվում է համապոլիմերի ստացման եղանակը, բարձրանում են դրա ջրակլանող եւ ջրապահող հատկությունները:

---

(51) 7 **G01L 5/00** (11) **1160** (13) **A2**
(21) P20010107 (22) 27.08.2001
(42) 20.11.2001

(72) Կարեն Ղուլղազարյան (AM), Յուրիկ Սաֆարյան (AM)

(71) Կարեն Ղուլղազարյան (AM)

(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)

(54) **Ճնշման գերարագագործ տվիչ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրոնիկայի բնագավառին: Սարքը նախատեսված է արագափոխ ճնշումների գրանցման համար:

Տվիչը պատրաստված է կիսաալիքային ռեզոնատորի տեսքով, որն ունի արտաքին եւ ներքին հաղորդաճողեր, վերին ու ստորին պատեր: Վերին պատը կառուցված է ճնշումազգայուն թիթեղից, որի էլեկտրական դիմադրությունը կախված է նրա վրա գործադրված ճնշման մեծությունից: Ռեզոնատորը գրգռվում է բարձր հաճախության գեներատորի ազդանշաններով: Ճնշման ազդեցության տակ փոխվում է ռեզոնատորի լարումը, ուստի եւ՝ ելքային լարումը: Ելքային լարման փոփոխման տեսքը համապատասխանում է գրանցվող ճնշման փոփոխման տեսքին, 1նկ.:

---

(51) 7 **G01M 17/00** (11) **1161** (13) **A2**
(21) P20020003 (22) 16.01.2002
(42) 15.03.2002

(72) Նորիկ Բազիկյան (AM), Գագիկ Հովհաննիսյան (AM), Սամվել Սիրեկանյան (AM), Նշան Համբարձումյան (AM)

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Լայնական լանջի վրա մեքենայի բեռնվածության նմանակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաների փորձարկումներին եւ կարող է կիրառվել լանջերի հաստատուն թեքությունների վրա բեռնվածության նմանակման համար:

Եղանակը հիմնված է հորիզոնական տեղանքում մեքենայի՝ արտաքին ուժով բեռնավորման ստեղծման վրա, որն իրականացնում են մեքենայի ծանրության կենտրոնով անցնող եւ լանջով դեպի վար ուղղված ուժի կիրառմամբ: Կիրառվող ուժն որոշում են որպես $2G\sin\alpha/2$ մեծություն, որտեղ՝

G-ն՝ մեքենայի ծանրության ուժն է, իսկ α-ն՝ լանջի թեքության անկյունը, եւ ուղղում են հորիզոնի նկատմամբ $\alpha/2$ անկյունով դեպի վեր:

Ապահովվում է լայնական թեքության վրա աշխատող մեքենայի շահագործման հատկանիշների փորձնական գնահատումը, ստացված տվյալների բարձր ճշգրտությունն ու հավաստիությունը, 3 նկ.:

---

(51) 7 **G01N 33/24** (11) **1162** (13) **A2**
(21) P20010159 (22) 12.12.2001
(42) 15.02.2002
(72) Հովհաննես Նաղաշյան (AM), Օլեգ Շչերբակով (AM)
(71) Հովհաննես Նաղաշյան (AM), Օլեգ Շչերբակով (AM)
(73) Հովհաննես Նաղաշյան, Երեւան, Սարյան 33, բն. 34 (AM), Օլեգ Շչերբակով, Երեւան, Տիգրան Մեծի պ-ի նրբ.10, բն. 15 (AM)

(54) **Հողի սանիտարա-ճիճվաբանական հետազոտման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ հողում ախտածին որդերի ձվերի հայտնաբերմանը եւ անջատմանը:

Առաջարկվում է հողի սանիտարա-ճիճվաբանական հետազոտման եղանակ, ըստ որի վարակված հողի նմուշին ավելացնում են ջուր, խառնում, ջրի մակերեւույթից հեռացնում խոշոր մասնիկները, խառնուրդը կենտրոնախուսում, հեռացնում վերնստվածքային հեղուկը, իսկ նստվածքին ավելացնում ֆլոտացման լուծույթ՝ կերակրի աղի հագեցած լուծույթի եւ լվացող հեղուկի 1:1 հարաբերակցությամբ խառնուրդ, կրկին կենտրոնախուսում, խառնուրդի մակերեւույթից վերցնում ձվերը եւ հետազոտում մանրադիտակով:

Բարձրանում է հետազոտման արդյունավետությունը:

---

(51) 7 **G09F 7/18** (11) **1163** (13) **A2**
G09F 7/22
(21) P20010111 (22) 30.08.2001
(42) 20.11.2001
(72) Արամ Մանուկյան (AM)
(71) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ (AM), Արամ Մանուկյան(AM)
(73) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, Երեւան, Սայաթ-Նովայի 11(AM), Արամ Մանուկյան, Երեւան, Քուչակի 21ա (AM)

(54) **Գովազդային ցուցադրավահանակի հենարան**

(57) Գովազդային ցուցադրավահանակի հենարանն ունի վերեւի եւ ներքեւի ծայրերին հորիզոնական հարթակներ ունեցող ուղղաձիգ հենասյուն, վերեւի հարթակի վրա տեղադրված վերին եւ առնվազն մեկ ներքին հորիզոնական հեծաններից կազմված կառուցատարր եւ գովազդի նյութը կառուցատարրի վրա ամրացնող տարրեր, մասնավորապես, առնվազն երեք կարճ սյուներ: Հորիզոնական հեծանները միմյանց եւ ուղղաձիգ հենասյան հետ միացված են անցքեր ունեցող կցվանքային բարձակների եւ կողքերից ելուններ ունեցող կցվանքային բարձակների միջոցով:

Ներքին հորիզոնական հեծաններից յուրաքանչյուրն անցնում է կցվանքային բարձակների անցքերի միջով, ընդ որում, կցվանքային բարձակներից առնվազն երկուսն միացված են ուղղաձիգ հենասյան վերեւի ծայրի հորիզոնական հարթակին, իսկ կողքերից ելուններ ունեցող կցվանքային բարձակներից առնվազն երեքը՝ հաջորդաբար իրենց վերեւի հորիզոնական հեծանին: Գովազդային ցուցադրավահանակի հենասյունը գետնին ամրացնելու համար ունի ներքին հորիզոնական հարթակ, որն ամրացվում է հիմնակմախք եւ խարսխման կեռեր ունեցող բետոնային հանգույցին: Պարզեցվում է կոնստրուկցիայի կառուցվածքը, բարձրանում է հուսալիությունը եւ մեծանում են օգտագործման հնարավորությունները, 4 նկ.:

---

(51) 7 **G09F 7/18** (11) **1164** (13) **A2**
G09F 7/22
(21) P20010120 (22) 14.09.2001
(42) 20.11.2001
(72) Արամ Մանուկյան (AM)
(71) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ (AM), Արամ Մանուկյան (AM)

(73) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, Երեւան, Սայաթ-Նովայի 11 (AM), Արամ Մանուկյան, Երեւան, Քուչակի 21ա (AM)

(54) **Գովազդային ցուցադրավահանակ**

(57) Գովազդային ցուցադրավահանակն ունի ուղղաձիգ հենասյուն եւ ցուցանմուշի տեղադրման վանդակաձեւ վահանակ, որը կազմված է միմյանց հատող ուղղաձիգ եւ հորիզոնական հեծաններից եւ ցցաձողային բարձակների միջոցով միացված է հենասյանը :

Բարձակներն անցնում են ուղղաձիգ հենասյան մեջ փորված ընդլայնական միջանցիկ անցքերով, իսկ ուղղաձիգ եւ հորիզոնական հեծանների միմյանց հետ հատման տեղերում արված են մոնտաժման, օրինակ՝ եռակցման հանգույցներ, ընդ որում, հենասյունը եւ բարձակներն ունեն սահմանափակիչներ: Ուղղաձիգ հենասյան եւ վանդակաձեւ վահանակի քանակն առնվազն մեկն է, ցցաձողային բարձակների քանակը՝ առնվազն երկուսը: Գովազդային ցուցադրավահանակի հենասյունը գետնին ամրացնելու համար ունի ներքին հորիզոնական հարթակ, որն ամրացվում է հիմնակմախք եւ խարսխման կեռեր ունեցող բետոնային հանգույցին:

Պարզեցվում է կոնստրուկցիայի կառուցվածքը, բարձրանում է հուսալիությունը եւ մեծանում են օգտագործման հնարավորությունները, 6 նկ.:

---

(51) 7 **G10D 7/06** (11) **1165** (13) **A2**
(21) P20010144 (22) 19.11.2001
(42) 18.12.2001

(72) Գեորգի Սինասյան (AM), Սերգեյ Ավանեսով (AM)

(71) Գեորգի Սինասյան (AM)

(73) Գեորգի Սինասյան (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) **Փողային երաժշտական գործիք դուդուկ**

(57) Գյուտը վերաբերում է փայտյա երաժշտական գործիքներին, մասնավորապես դուդուկներին:

Առաջարկվող դուդուկը պարունակում է կարգավորիչ ունեցող եղեգնյա փողածայրոց եւ 15 ձայնային անցքերով փայտյա փող՝ փոքր օկտավի «մի»-ից մինչեւ երկրորդ օկտավի «ռե»-ն: Դուդուկն ունի փականա-լծակային համակարգ:

Ընդլայնվում է դուդուկի ձայնածավալը, 2 նկ.:

---

(51) 7 **G10D 7/06** (11) **1166** (13) **A2**
(21) P20010157 (22) 07.12.2001
(42) 14.01.2002

(72) Գեորգի Սինասյան (AM), Սերգեյ Ավանեսով (AM)

(71) Գեորգի Սինասյան (AM)

(73) Գեորգի Սինասյան (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) **Փողային երաժշտական գործիք դուդուկ**

(57) Գյուտը վերաբերում է փայտյա փողային երաժշտական գործիքներին, մասնավորապես դուդուկներին: Առաջարկվող դուդուկը պարունակում է կարգավորիչ ունեցող եղեգնյա փողածայրոց, ձայնային անցքեր ունեցող փայտյա փող եւ փականա-լծակային համակարգ: Ձայնային անցքերն ունեն առաջին օկտավի «ֆա»-ից մինչեւ մեծ օկտավի «սոլ»-ը ընդգրկող ձայնաշար: Փողանցքի ստորին մասը կատարված է կոնաձեւ՝ լայնացումով դեպի ստորին ծայրը, իսկ ստորին ծայրին տեղադրված է փողալայնուկ:

Փողի վերին ծայրի եւ փողծայրոցի միջեւ տեղակայված է անկյունաձեւ խողովակային հարմարակցիչ, իսկ փողալայնուկը կատարված է անկյունաձեւ:

Ընդլայնվում է փողային երաժշտական գործիքների տեսականին, 8 նկ.:

---

(51) 7 **H02N 11/00** (11) **1167** (13) **A2**
(21) P20010104 (22) 23.08.2001
(42) 18.12.2001

(72) Հրաչիկ Շամիրյան (RU)

(71) Հրաչիկ Շամիրյան (RU)

(73) Հրաչիկ Շամիրյան , Վոլգոգրադ, կենտրոն. շրջ., Սկոսիրովի հանրակաց. 1բ, մասնաշենք 4 (RU)

(54) **Մագնիսական շարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես, մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման սարքերին:

Մագնիսական շարժիչն ունի ծնկավոր տանող եւ չորս հատ չորսծնկանի լիսեռ, որոնցից յուրաքանչյուրի ծայրերին անշարժ ամրացված են երկու ատամնանիվ: Ծնկավոր տանող լիսեռի կենտրոնական իրանին խաչաձեւ միացված են չորս աշխատանքային գլան: Յուրաքանչյուր գլանի մեջ անշարժ տեղադրված է գլանաձեւ մագնիսական պար-

կուճ, իսկ նրա մեջ՝ մագնիսական մխոց: Մագնիսական մխոցն ու մագնիսական պարկուճը միմյանցից բաժանված են օդի շերտով եւ նրանց նույնանշան մագնիսական բեւեռներն ուղղված են մեկը մյուսին: Չորսծնկանի լիսեռի ծնկներից յուրաքանչյուրի վրա անշարժ ամրացված է կիսալուսնաձեւ մագնիս, որի նույնանշան մագնիսական բեւեռը ուղղված է մագնիսական մխոցի վերին նույնանշան բեւեռին, ինչը ապահովում է մագնիսական մխոցի շարժման հնարավորությունը, 6 նկ.:

---

(51) 7 **H02N 11/00** (11) **1168** (13) **A2**
(21) P20010105 (22) 23.08.2001
(42) 18.12.2001

(72) Հրաչիկ Շամիրյան (RU)
(71) Հրաչիկ Շամիրյան (RU)
(73) Հրաչիկ Շամիրյան , Վոլգոգրադ, կենտր. շրջ., Սկոսիրովի, հանրակացարան 1բ, մասնաշենք 4 (RU)

(54) **էլեկտրամագնիսական հոսքով մագնիսական շարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես, մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման սարքերին եւ կարող է կիրառվել արդյունաբերության տարբեր ոլորտներում: Մագնիսական շարժիչն ունի ծնկավոր տանող եւ չորս հատ չորսծնկանի լիսեռ, որոնցից յուրաքանչյուրի ծայրերին անշարժ ամրացված են երկու ատամնանիվ: Ծնկավոր տանող լիսեռի կենտրոնական իրանին խաչաձեւ միացված են չորս աշխատանքային գլաններ: Յուրաքանչյուր գլանի մեջ անշարժ տեղադրված է գլանաձեւ մագնիսական պարկուճ, իսկ նրա մեջ՝ մագնիսական մխոց: Մագնիսական մխոցն ու մագնիսական պարկուճը միմյանցից բաժանված են օդի շերտով եւ նրանց նույնանշան մագնիսական բեւեռները ուղղված են մեկը մյուսին: Յուրաքանչյուր չորսծնկանի լիսեռի վրա տեղադրված է զսպանակավոր էլեկտրական խրոցակ, իսկ ծնկներից յուրաքանչյուրի վրա անշարժ ամրացված է կիսալուսնաձեւ մագնիս, որի նույնանշան մագնիսական բեւեռն ուղղված է մագնիսական մխոցի վերին նույնանշան բեւեռին, ինչը ապահովում է մագնիսական մխոցի շարժման հնարավորությունը: Այդ լիսեռի յուրաքանչյուր ծնկին, որպես ուժեղացուցիչ մագնիս, տեղադրված է բեռ բարձրացնող էլեկտրամագնիս:

Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 6 նկ.:

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՄՀԿ ST.9 ստանդարտի

11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
U օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 **A01C 17/00** (11) **53** (13) **U**
(21) U20020081 (22) 22.05.2002
(72) Հենրիկ Բարսեղյան (AM)
(71) Հենրիկ Բարսեղյան (AM), Մարինե Բարսեղյան (AM)
(73) Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գ.Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Մարինե Բարսեղյան, Երեւան, Գ.Նժդեհի 30/3, բն. 31 (AM)
(54) **Թեքություններում աշխատող կենտրոնախույս պարարտանյութացրիչի աշխատանքային օրգան**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսության մեքենաշինությանը, մասնավորապես՝ թեքություններում աշխատող պարարտանյութ ցրող մեքենաների աշխատանքային օրգաններին:

Աշխատանքային օրգանն ունի շրջանակ, շրջանակի վրա տեղակայված՝ ուղղածիգ առանցքներով, իրար հակադիր պտտվող երկու թիակավոր սկավառակ, որոնցից յուրաքանչյուրն ունի սկավառակը շրջագծով ընդգրկող պարարտանյութի ցրման սահմանափակիչ՝ շրջանային կորությամբ վահան, պարարտանյութը մատուցող փոխադրիչ, պարարտանյութը սկավառակներին մատուցող ուղղորդիչ եւ երկբազուկ լծակով ավտոմատ կարգավորող շարժահաղորդ մեխանիզմ: Ընդ որում, պարարտանյութի մատուցող ուղղորդիչն ունի շարժուն՝ կարգավորվող թեւեր, իսկ պարարտանյութի ցրման սահմանափակիչ վահաններին, սկավառակին զուգահեռ շարժման հնարավորությամբ, կապված են ցրման սահմանափակիչ-ուղղատու կարգավորվող վահաններ, որոնք իրենց հերթին հողակապավոր լծակներով միացված են ավտոմատ կարգավորվող շարժահաղորդ մեխանիզմի շարժաբեր երկբազուկ լծակին:

Ապահովվում է պարարտանյութի ցրման հավասարաչափությունն՝ փոփոխական թեքություններում լայնական ուղղությամբ, 4 նկ.:

---

(51) 7 **A47J 36/28** (11) **54** (13) **U**
B65D 83/74
(21) U20020096 (22) 30.05.2002
(72) Հայկազունի Անդրեասյան (AM)
(71) Հայկազունի Անդրեասյան (AM)
(73) Հայկազունի Անդրեասյան, Երեւան, Ավան, Դանիել Վարուժանի թաղամաս, 10, բն. 26 (AM)
(54) **Ըմպելիքների տաքացման կամ սառեցման միանգամյա օգտագործման կոնտեյներ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդի եւ ըմպելիքների տաքացման սարքերին, այն է՝ ըմպելիքների տաքացման/սառեցման համար միանգամյա օգտագործման տարաներին, որոնցում օգտագործվում է ջերմանջատիչ/ջերմակլանիչ ռեակցիաների արդյունքում առաջացած ջերմությունը/ցրտությունը:

Կոնտեյներն ունի ըմպելիքի համար եւ երկբաղադրամասանի ջերմային բաղադրանյութի համար իրարից մեկուսացված խցիկներ, ընդ որում ջերմային բաղադրանյութի խցիկում բաղադրամասերը, որոնցից մեկը ջուր է, իրարից անջատված են խզվող թաղանթով: Ջերմային բաղադրանյութի խցիկը տեղակայված է ըմպելիքի խցիկի խոռոչում, երկու խցիկների ստորին ճակատների եզրերը միակցված են իրար, իսկ ըմպելիքի խցիկի վերին ճակատը փակված է հերմիտիկացնող թաղանթով: Ջերմային բաղադրանյութի խցիկի վերին ճակատը խուլ է, իսկ ստորին ճակատը կատարված է ճկուն նյութից եւ ունի դանակավոր տարր: Ջերմային բաղադրանյութի խցիկի ստորին ճակատը կատարված է սնամեջ խցանի տեսքով, որի կողմնային մակերեւույթին կա շրջելուն, իսկ բաղադրանյութի խցիկի կողմնային մակերեւույթն ունի այդ շրջելունին համապատասխանող շրջանաձեւ ակոսներ:

Պարզեցվում է կոնտեյների կառուցվածքը, 1 նկ.:

---

(51) 7 **B60C 23/04** (11) **55** (13) **U**
(21) U20020084 (22) 24.05.2002
(72) Տիգրան Խաչարյան (AM)
(71) Տիգրան Խաչարյան (AM)
(73) Տիգրան Խաչարյան, Երեւան, Խորենացու 47, բն. 55 (AM)
(54) **Տրանսպորտային միջոցի օդաճնշական դողում օդի ճնշման հսկման ցուցասարք**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է տրանսպորտային միջոցների դողերին եւ կարող է օգտագործ-

վել այլ բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է գազի ճնշման (մինչեւ 10կգ/սմ քառ.) դիտողական հսկում:

Ցուցասարքը, որը պարունակում է երկու մասից կազմված իրան, որի վերին մասում ներմամլված է թափանցիկ նյութից պատրաստված, ելուստ ունեցող սնամեջ գլան, իսկ ներքեւի մասում՝ միջանցիկ անցքերով հրիչ եւ պարուրակով բռնիչ: Հրիչի վրա տեղադրված է կենտրոնում ուռուցիկություն ունեցող թաղանթ: Թափանցիկ գլանը պարունակում է զսպանակած երկգույն մխոց, որի արտաքին ճակատային մասն ունի թաղանթի ուռուցիկությունը ընդգրկող գոգավորություն: Իրանի վերին եւ ներքեւի մասերի միջեւ կա թափանցիկ գլանի միջին մասով առաջացած պատուհան:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը եւ շահագործումը, 1 նկ.:

---

(51) 7 **H05K 7/02** (11) **56** **(13) U**
H05K 7/12
(21) U20020116 (22) 21.06.2002
(71) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ(AM)
(72) Արտյուշ Ավետիսյան (AM), Իգոր Աբյան (AM)
(73) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ (AM)
(74) Ռ. Մանասերյան
(54) **Հաբի տեսքի գալվանական տարրով սնուցվող տպասխեմա**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրատեխնիկային, ավելի կոնկրետ՝ էներգիայի ցածր սպառում ունեցող սարքերում կիրառվող տպասխեմաներին:

Հաբի տեսք ունեցող գալվանական տարրով սնուցվող տպասխեմայի վրա արված է բացվածք, որի մեջ տեղադրվում է գալվանական տարրը այնպես, որ նրա բեւեռների հարթությունները ուղղահայաց են տպասխեմայի հարթությանը, ընդ որում բացվածքը համապատասխանում է գալվանական տարրի առանցքային հատվածքին, իսկ գալվանական տարրի բեւեռների հարթությունները միացված են տպասխեմային բերիլիումային բրոնզից պատրաստված զսպանակավոր հպակների միջոցով:

Պարզեցվում է տպասխեմայի կառուցվածքը, հեշտանում է գալվանական տարրի փոխարինումը, 2 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Արդյունաբերական նմուշներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի

11 *արտոնագրի համարը*

13 *փաստաթղթի տեսակի կոդը*

S արդյունաբերական նմուշի արտոնագիր

21 *հայտի համարը*

22 *հայտի ստացման թվականը*

23 *ցուցահանդեսային առաջնության թվականը*

24 *թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը*

31 *առաջնային հայտի համարը*

32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*

33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*

51 *արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)*

54 *արդյունաբերական նմուշի անվանումը*

55 *արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)*

57 *էական հատկանիշների ամբողջությունը*

71 *հայտատուն(ները), երկրի կոդը*

72 *հեղինակը(ները), երկրի կոդը*

73 *արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը*

74 *արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 **10-05** (11) **60** (13) **S**
(21) D20020008 (22) 01. 07. 02
(72) Արտյուշ Ավետիսյան (AM), Իգոր Աբյան (AM)
(71) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ (AM)
(73) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ (AM)
(74) Ռ. Մանասերյան
(54) **Լարման ազդանշանիչ**
(55)






(57) Լարման ազդանշանիչ, որն ունի՝


կորացված եզրերով ուղղանկյուն զուգահեռանիստի տեսքով իրան • իրանի դիմային կողմի վերին մասում՝ ցցուն եզրագծով առանձնացված շրջան, դրան համակենտրոն կլոր ցանց՝ ուղղանկյունաձեւ բջիջներով • իրանի դիմային կողմի ներքեւի մասում՝ ցցուն եզրագծով առանձնացված ուղղանկյուն՝ դրանում փակցված պիտակով • իրանի վերին նիստի առջեւի մասի կենտրոնում՝ ցցուն լուսային ցուցիչ • իրանի հետեւի կողմի վերին մասի կենտրոնում՝ ուղղանկյուն բացվածքով, եռակի ճկված մետաղյա թիթեղ • առաջին թիթեղի բացվածքում ամրացված, նույն ձեւով ճկված երկրորդ մետաղյա թիթեղ, որն ավելի երկար է բացվածքից եւ առաջինի հետ կազմում է հպակային զույգ.

• Շահագործման հեշտության եւ հարմարության ապահովում, շնորհիվ սարքի փոքր չափերի, կառավարման օրգանների բացակայության ու հագուստի տարրերին այն կրելու հնարավորության:

---

(51) 7 **10-05** (11) **61** (13) **S**
(21) D20020011 (22) 08. 07. 02
(72) Արտյուշ Ավետիսյան (AM), Իգոր Աբյան (AM)
(71) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ (AM)
(73) «Էներգոզաշչիտա» ՍՊԸ (AM)
(74) Ռ. Մանասերյան
(54) **Քարձր լարման ցուցիչ**
(55)





(57) Քարձր լարման ցուցիչ, որն ունի հետեւյալ կառուցվածքային տարրերը՝

մի ծայրը խցանով փակված, մյուսը պարուրակավոր ականոցով եզրափակված գլանաձեւ խողովակի տեսքով իրան եւ այն ընդգրկող սկավառակաձեւ պաշտպանիչ վահանակ, որով առանձնանում է բռնակային մասը գ իրանին պարուրակավոր կապով միացված աշխատանքային մաս՝ կազմված իրանի տրամագծին հավասար կտրվածք ունեցող եւ դրան համառանցք գլանաձեւ խողովակի եւ թեք փոքր հիմքով, հատված կոնի տեսքով բաժակի զուգակցումից, ընդ որում բաժակի եւ խողովակի առանցքները զուգահեռ են գ բաժակի խոռոչում, դրա փոքր հիմքին մոտ՝ մեկուսիչ նյութից պատրաստված մահիկաձեւ թիթեղ, դրա վրա տեղակայված ձայնային եւ լուսային ազդանշանիչներով գ իրանին համառանցք, ավելի փոքր տրամագծով գլանաձեւ խողովակի տեսքով երկարացման ճող, որը մի ծայրով միացված է աշխատանքային մասին, իսկ մյուս ծայրով, կոնաձեւ հարմարակի միջոցով՝ ասեղնաձեւ հպակին:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ
ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային եւ սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՄՀԿ ST.60 ստանդարտի

600 *նախկին ԽՍՀՄ վկայականի համարը եւ հայտի ներկայացման թվականը*

111 *գրանցման հերթական համարը*

151 *գրանցման թվականը*

181 *գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*

210 *հայտի համարը*

220 *հայտի ներկայացման թվականը*

230 *ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*

310 *առաջին հայտի համարը*

320 *կոնվենցիայով առաջնության թվականը*

330 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*

510 *ապրանքների եւ (կամ) ծառայությունների ցանկը*

511 *դասերը ըստ նշանների գրանցման ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում)*

526 *չպահպանվող տարրեր*

540 *ապրանքային նշանի պատկերը*

551 *կոլեկտիվ նշան*

554 *ծավալային նշան*

591 *գույնը եւ գունային համակցությունը*

646 *իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը եւ թվականը*

730 *նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը*

740 *արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին

(210) **20010526** (111) **6706**
(220) **17.08.2001** (151) **03.04.2002**
(181) **17.08.2011**
(730) Ջենզիմ Քորփորեյշն, Մասաչուսետսի նահանգ, US
(310) 2120780 (320) 27.02.2001 (330) US
(540)

EPICEL ASAProgram

(511) (510)
դաս 5. դեղագործական, բուժական, թերապեւտիկ եւ անասնաբուժական պատրաստուկներ եւ նյութեր. ախտորոշման ռեակտիվներ՝ ընդգրկված դաս 5-ում. էնզիմներ (ֆերմենտներ)՝ ընդգրկված դաս 5-ում. քիմիական նյութեր եւ քիմիական պատրաստուկներ, որոնք նախատեսված են դեղագործական, բժշկական եւ անասնաբուժական արդյունաբերության մեջ օգտագործելու համար. մարդու կուլտիվացված բջիջներ.
դաս 44. բժշկական ծառայություններ՝ ընդգրկված դաս 44-ում:
(740) Հ. Դավթյան

---

(210) **20010527** (111) **6707**
(220) **17.08.2001** (151) **03.04.2002**
(181) **17.08.2011**
(730) Ջենզիմ Քորփորեյշն, Մասաչուսետսի նահանգ, US
(310) 2111078 (320) 21.02.2001 (330) US
(540)

EPICEL

(511) (510)
դաս 5. դեղագործական, բուժական, թերապեւտիկ եւ անասնաբուժական պատրաստուկներ եւ նյութեր. ախտորոշման ռեակտիվներ՝ ընդգրկված դաս 5-ում. էնզիմներ (ֆերմենտներ)՝ ընդգրկված դաս 5-ում. քիմիական նյութեր եւ քիմիական պատրաստուկներ, որոնք նախատեսված են դեղագործական, բժշկական եւ անասնաբուժական արդյունաբերության մեջ օգտագործելու համար. մարդու կուլտիվացված բջիջներ.
դաս 44. բժշկական ծառայություններ՝ ընդգրկված դաս 44-ում:
(740) Հ. Դավթյան

---

(210) **20010528** (111) **6708**
(220) **17.08.2001** (151) **03.04.2002**
(181) **17.08.2011**
(730) Ջենզիմ Քորփորեյշն, Մասաչուսետսի նահանգ, US
(310) 2111094 (320) 21.02.2001 (330) US
(540)

CARTICEL

(511) (510)
դաս 5. դեղագործական, բուժական, թերապեւտիկ եւ անասնաբուժական պատրաստուկներ եւ նյութեր. ախտորոշման ռեակտիվներ՝ ընդգրկված դաս 5-ում. էնզիմներ (ֆերմենտներ)՝ ընդգրկված դաս 5-ում. քիմիական նյութեր եւ քիմիական պատրաստուկներ, որոնք նախատեսված են դեղագործական, բժշկական եւ անասնաբուժական արդյունաբերության մեջ օգտագործելու համար. մարդու կուլտիվացված բջիջներ.
դաս 44. բժշկական ծառայություններ՝ ընդգրկված դաս 44-ում:
(740) Հ. Դավթյան

---

(210) **20020052** (111) **6709**
(220) **01.02.2002** (151) **03.04.2002**
(181) **01.02.2012**
(730) "Արտաշատ-Վինկոն" ՓԲԸ, Արարատի մարզ, գյուղ Մխչյան, ԱՄ
(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է շագանակագույն, դեղին, բրոնզագույն, երկնագույն, կապույտ, կանաչ, կարմիր, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)
դաս 33. հայկական կոնյակ:

---

(210) **20010263** (111) **6710**
(220) **26.04.2001** (151) **09.04.2002**
(181) **26.04.2011**
(730) "Ապարանի պանրի գործարան" ՓԲԸ, Ապարան, Բաղրամյան 4, AM
(540)



(526) "Ա", "Պ" եւ "Գ" տառերն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է կապույտ եւ սպիտակ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 29. կաթնամթերք:

---

(210) **20010372** (111) **6711**
(220) **04.06.2001** (151) **09.04.2002**
(181) **04.06.2011**
(730) Գելեհեր Լիմիթիդ, GB
(540)

LIGGETT-DUCAT

(511) (510)
դաս 34. մշակված եւ չմշակված ծխախոտ. ծխելու ծխախոտ, ծխամորճի համար ծխախոտ, ձեռքով փաթաթելու ծխախոտ, ծամելու ծխախոտ. սիգարետներ, պապիրոսներ, սիգարներ, սիգարիլներ. ծխելու նյութեր, որոնք վաճառվում են առանձին կամ ծխախոտի հետ խառնուրդի տեսքով (չունեն բուժական կամ առողջարար նշանակություն). քթախոտ, ծխելու պիտույքներ՝ ընդգրկված դաս 34-ում, սիգարետի (պապիրոսի) թուղթ, սիգարետների համար պարկուճներ, լուցկի:
(740) Ռ. Գեւորգյան

---

(210) **20010504** (111) **6712**
(220) **07.08.2001** (151) **09.04.2002**
(181) **07.08.2011**
(730) "Արտակ" Արտադրական կոոպերատիվ, Կոտայքի մարզ, գյուղ Սարանիստ, AM
(540)



(526) Բացի "ՆԱՋԵԼԻ" բառից մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է կարմիր, կապույտ, դեղին, բորդո, կանաչ, նարնջագույն, սպիտակ եւ սեւ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 32. զովացուցիչ ըմպելիք:

---

(210) **20010506** (111) **6713**
(220) **07.08.2001** (151) **09.04.2002**
(181) **07.08.2011**
(730) "Արտակ" Արտադրական կոոպերատիվ, Կոտայքի մարզ, գյուղ Սարանիստ, AM
(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է սպիտակ, բաց եւ մուգ կապույտ, դեղին, մոխրագույն, կանաչ եւ սեւ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 29. թան:

---

(210) **20010517** (111) **6714**
(220) **15.08.2001** (151) **09.04.2002**
(181) **15.08.2011**
(730) Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի, US
(540)

FIRST STEPS

(511) (510)

դաս 16. թղթից կամ ցելյուլոզից պատրաստված միանգամյա խանձարուրներ.

դաս 25. հագուստեղեն:

(740) Ն. Թումանյան

---

(210) **20010546** (111) **6715**
(220) **31.08.2001** (151) **09.04.2002**
(181) **31.08.2011**

(730) Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի, US

(540)

PRINGLES

(511) (510)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս եւ որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, չորացված եւ ջերմամշակման ենթարկված մրգեր եւ բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ եւ կաթնամթերք. սննդային յուղեր եւ ճարպեր. պահածոներ. պիկուլի (մանրաթթու). կարտոֆիլի չիփսեր եւ եգիպտացորենից, պանրից կամ կարտոֆիլից պատրաստված թեթեւ խորտիկներ.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա (մանիոկա), սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր եւ հացահատիկային մթերք, հացահատիկային արտադրանք, հրուշակեղեն, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (բացառությամբ սալաթների համեմունքի). համեմունք. հացահատիկային մթերքից պատրաստված թեթեւ խորտիկներ եւ չիփսեր. սալաթների համեմունք:

(740) Ն. Թումանյան

---

(210) **20010553** (111) **6716**
(220) **07.09.2001** (151) **09.04.2002**
(181) **07.09.2011**

(730) Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի, US

(310) 2122836 (320) 09.03.2001 (330) US

(540)

SPINBRUSH

(511) (510)

դաս 3. միջոցներ բերանի խոռոչի, ատամների, կոկորդի, լնդերի եւ այտագրպանիկի խնամքի եւ հիգիենայի համար, ատամի քարի եւ կարիեսի առաջացումը կանխարգելող պատրաստուկներ բերանը ողողելու համար, ատամները մաքրելու միջոցներ, միջոցներ ատամների խնամքի համար, ատամի փոշիներ, ատամի մածուկներ, բերանը ողողելու պատրաստուկներ, աերոզոլներ բերանի խոռոչի համար, ատամի ժելեր, ֆտոր պարունակող ժելեր, ֆտոր պարունակող պատրաստուկներ բերանը ողողելու համար, մաքրող փոշիներ, ատամի քարի ներկման հաբեր. բոլոր վերը նշված ապրանքները ընդգրկված դաս 03-ում.

դաս 5. դեղամիջոցներ բերանի խոռոչի, ատամների, կոկորդի, լնդերի եւ այտագրպանիկի խնամքի եւ հիգիենայի համար, ատամի քարի եւ կարիեսի առաջացումը կանխարգելող պատրաստուկներ բերանը ողողելու համար, ատամները մաքրող միջոցներ, միջոցներ ատամների խնամքի համար, ատամի փոշիներ, ատամի մածուկներ, բերանը ողողելու պատրաստուկներ, բերանի խոռոչի աերոզոլներ, ատամի ժելեր, ֆտոր պարունակող ժելեր, ֆտոր պարունակող պատրաստուկներ բերանի խոռոչի ողողման համար, մաքրող փոշիներ, ատամի քարի ներկման հաբեր՝ ընդգրկված 5-րդ դասում, ատամների եւ լնդերի կանխարգելիչ բուժման միջոցներ, ծամելու հաբեր ատամների խնամքի համար, մաքրման եւ խնամքի, այդ թվում վարակազերծիչ ազդեցությամբ միջոցներ արհեստական ատամների, ատամների պրոթեզների, երկաթակապերի եւ ատամների կամրջաձեւ պրոթեզների համար, սոսնձող նյութեր արհեստական ատամների համար, սոսնձող փոշիներ.

դաս 21. ատամի խոզանակներ. ատամի էլեկտրական խոզանակներ. նյութեր խոզանակներ պատրաստելու համար. անդրաձայնային մաքրող սարքեր ատամի պրոթեզների համար՝ ընդգրկված 21-րդ դասում. ոչ էլեկտրական հարմարանքներ եւ նյութեր մաքրման համար, որոնք ընդգրկված են 21-րդ դասում. նշված ապրանքների մասեր եւ սարքավորումներ, որոնք ընդգրկված են 21-րդ դասում. խոզանակներ, բռնիչներ եւ բաշխիչ սարքեր, որոնք ընդգրկված են 21-րդ դասում:


(740) Ն. Թումանյան

---

(210) **20020109** (111) **6717**
(220) **07.03.2002** (151) **09.04.2002**
(181) **07.03.2012**

(730) Անհատ ձեռներեց Սեդրակ Սեդրակյան, Երեւան, Վարդանանց 24, բն. 6, AM

(540)



(526) “ROYAL” եւ “FISH” բառերն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է կապույտ, սպիտակ, ոսկեգույն, սեւ, դարչնագույն, կարմիր եւ մոխրագույն գունային համակցությամբ:
(511) (510)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս եւ որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, չորացված եւ ջերմամշակման ենթարկված մրգեր եւ բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ եւ կաթնամթերք. սննդային յուղեր եւ ճարպեր.

դաս 31. կենդանիներ, մասնավորապես ձկներ.

դաս 43. սննդամթերքով եւ ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում. մասնավորապես կենդանի եւ տարբեր ձեւերով պատրաստված ձկների վաճառք:

---

(210) **20020153** (111) **6718**
(220) **19.03.2002** (151) **09.04.2002**
(181) **19.03.2012**
(730) “Ով ով է” ՍՊԸ, Երեւան, Նալբանդյան 25/27 շենք, բն.1, AM
(540)



(526) “REPUBLIC OF ARMENIA”, “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ” եւ “РЕСПУБЛИКА АРМЕНИЯ” արտահայտություններն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է սպիտակ, կարմիր, սեւ, կապույտ եւ դեղին գունային համակցությամբ:
(511) (510)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ եւ դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ եւ գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր եւ դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. մասնավորապես առեւտրային գործունեության տեղեկատվության գործակալություններ, համակարգչային հիմնապահարների տվյալների տեղեկատվության հավաքում, գործնական տեղեկատվություն եւ տեղեկատվության հավաքման եւ մշակման հետ կապված այլ ծառայություններ՝ ընդգրկված դաս 35-ում.

դաս 38. հեռահաղորդակցություն, հեռա- եւ (կամ) ռադիո-հաղորդումների հեռարձակում.

դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական եւ մշակութային միջոցառումների կազմակերպում, մասնավորապես տպագրական եւ հրատարակչական ծառայությունները եւ այդ արտադրանքի վաճառքը, հեռուստահաղորդումների պատրաստում:

---

(210) **20020154** (111) **6719**
(220) **19.03.2002** (151) **09.04.2002**
(181) **19.03.2012**
(730) “Ով ով է” ՍՊԸ, Երեւան, Նալբանդյան 25/27 շենք, բն.1, AM
(540)

ՈՎ Է ՈՎ

(511) (510)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ եւ դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ եւ գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր եւ դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում.

գրասենյակային ծառայություններ. մասնավորապես առեւտրային գործունեության տեղեկատվության գործակալություններ, համակարգչային հիմնապաշարների տվյալների տեղեկատվության հավաքում, գործնական տեղեկատվություն եւ տեղեկատվության հավաքման եւ մշակման հետ կապված այլ ծառայություններ՝ ընդգրկված դաս 35-ում.

դաս 38. հեռահաղորդակցություն, հեռա- եւ(կամ) ռադիո-հաղորդումների հեռարձակում.

դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական եւ մշակութային միջոցառումների կազմակերպում, մասնավորապես տպագրական եւ հրատարակչական ծառայությունները եւ այդ արտադրանքի վաճառքը, հեռուստահաղորդումների պատրաստում:

---

(210) **20020155** (111) **6720**
(220) **19.03.2002** (151) **09.04.2002**
(181) **19.03.2012**
(730) "Ով ով է" ՍՊԸ, Երեւան, Նալբանդյան 25/27 շենք, բն.1, AM
(540)

WHO IS WHO

(511) (510)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ եւ դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ եւ գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր եւ դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

